

25 ՏԱՐԻ ԵՏՔ

ԿԸ ՅԻՇԵՆՔ ԱՅՍՕՐ
ՆԻՒ ԵՈՐՔԻ 9/11-Ի
ԱՆՏԱՐԱԿԵՐՈՒՆ ՌՄԱՆԱՐՄԱՆ
ՋՈՆ ԴԱՐՁԱԾ ՆԱՎՏԱԿՆԵՐԸ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ԵՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՐԱՆԸ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԻՏԻ ՊԵ ԶԱՅԱՏԱՆԻՆ ՍԱՔԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԶԱՐՅԸ

14-էն 17 Սեպտեմբերին Սթրազպուրկի մէջ կայանալիք Եւրոպական խորհրդարանի լիագումար նիստի օրակարգին վրայ է Զայաստանէն Եւրոպական Միութիւն (ԵՄ) ներածուող ապրանքներու լայն շրջանակի մը համար մաքսատուրքերը առժամաբար ջնջելու առաջարկը. բուն քուէարկութիւնը տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 15-ին:

Նախագիծը, որուն նախապէս հաւանութիւն տուած էր ԵՄ-ի խորհուրդը, կը նախատեսէ երկու տարուան համար վերցնել հայկական շարք մը ապրանքներու մաքսատուրքերը: Միաժամանակ, առանց մաքսատուրքի ներածման չափաբաժիններ (quotas) պիտի սահմանուին գիւղատնտեսական ութ տեսակ արտադրանքներու համար, ինչպէս՝ խաղող, ծիրան, կեռաս, դեղձ եւ վարունգ: Սակայն, նախատեսուած են նաեւ պաշտպանական գործիքակազմեր, որոնք Եւրոպական Միութեան թոյլ կու տան միջամտել, եթէ հայկական ապրանքներու ներածման աճը բացասաբար ազդէ եւրոպացի արտադրողներուն վրայ:



(Ծար.ը տեսնել էջ 12)

ՌԻՆՏԱԴՈՐՆԵՐՈՎ ԱՐՏԱՍՈՎՈՐ ՈԳԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Զայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Զիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմէն թուրքիա ժամանած ուխտաւորներու խումբը կը շարունակէ իր շրջագայութիւնը՝ հայկական պատմական գաւառներուն մէջ: Ամերիկահայ

ուխտաւորները, որոնք շաբաթավերջին Վանայ լիճի Աղթամար կղզիի Ս. Խաչ՝ Երեմիի եկեղեցւոյ (այժմ թանգարան) երդիքին տակ մատուցած Ս. Պատարագէն վերջ շարունակեցին իրենց շրջագայութիւնը: Ուղեւորութեան ծրագրին վրայ կար Տիարպաքըր քաղաքը: Ուխտաւորները այցելեցին Ս. Կիրակոս եկեղեցին, ուր ստեղծուեցաւ մեծ խանդավառութիւն:



(Ծար.ը տեսնել էջ 12)

«WIZZ AIR»-Ը ԵՐԵՒԱՆԵՆ ԹՈՒՉՔՆԵՐ ՊԻՏԻ ՍԿՍԻ ԵՐԵՔ ՆՈՐ ՈՒՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Զունգարական՝ մատչելի գիներով թռիչքներ ապահովող «WizzAir» օդանաւային ընկերութիւնը կ'ընդլայնէ Զայաստանի մէջ իր գործունեութիւնը՝ Երեւանի մէջ խարսխուած իր օդանաւերուն թիւը հասցնելով չորսի եւ բանալով երեք նոր ուղղութիւն:

Ընկերութեան գլխաւոր առետրային տնօրէն Եան Մալին մամլոյ



(Ծար.ը տեսնել էջ 12)

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ԶԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐԺԸ ԶԻՐԸՆԿԱԼԵՑ ՇՄԵՐ-Ի ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Երուսաղէմի Զայոց Պատրիարք Ամեն. Տ. Նուրհան Ս. արք. Մանուկեան հիւրընկալեց՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն «Եկեղեցիները յանուն Միջին Արեւելքի խաղաղութեան» (ՇՄԵՐ) կազմակերպութեան պատիրակութիւնը: Սրբոց Յակոբեանց վանքէն ներս հիւր պատուիրակութիւնը Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Զօր կողմէ ընդունուեցաւ ջերմ մթնոլորտի մը մէջ: Պատրիարքարանի դահլիճի երդիքին տակ տեղի ունեցած գրոյցին ժամանակ Նորին Ամենապատուութեան կողքին էր Սուրբ Աթոռի դիւանապետ Տ. Աղան վարդապետ Գոգճեան:



Ամերիկակեդրոն ՇՄԵՐ կազմակերպութեան գործադիր տնօրէն տըթ. Մէյ Զանընի կողմէ կը գլխաւորուէր հիւրերու խումբը: Բաց աստի, Սուրբ Գերեզմանի ասպետական կարգի տեղակալ Վիքի Տաուն եւ Զայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Զիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի Ուաշինկթընի թեմակալ պատուիրակ Տ. Վիգէն արքեպիսկոպոս Այգագեան եւս հիւրերու շարքին էին: Ինչպէս ծանօթ է, Տ. Վիգէն արքեպիսկոպոս Այգագեան, միեւնոյն ժամանակ, Սրբոց Յակոբեանց միաբանութեան անդամներէն է:

Ըստ Սուրբ Աթոռի աղբիւրներուն կողմէ հրապարակուած հաղորդագրութեան՝ հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Միջին Արեւելքի

(Ծար.ը տեսնել էջ 12)


ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

«ՄԱՏԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ»

Նուիրուած
Երուանդ Ագատեանի
ազգային հասարակական ու
կուսակցական կեանքին եւ
գրական ու խմբագրական
վաստակին, 240 էջ:

Խմբագրութեամբ՝
ողբացեալին տարիներու
աշխատակիցներուն:

Ունենալու համար դիմել Ռ.Ա.Կ.- ի խմբագրատուն:



ՄԱՏԵԱՆ
ՅԻՇԱՏԱԿԻ
Երուանդ Ագատեան

10th Anniversary ամենակ

BAIKAR WEEKLY NEWSPAPER

SAVE the DATE

10TH ANNIVERSARY CELEBRATION

FRIDAY, NOVEMBER 6, 2026

ST LEON CHURCH HALL
FAIRLAWN, NEW JERSEY


Details to follow!

THANK YOU FOR 10 YEARS OF
SUPPORT, TRUST, AND COMMUNITY.

ՏԱՐԻՆԵՐԸ ՊԱՐԶԱՊԷՍ ԹՈՒՆԵՐ ԶԵՆ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Մի օր, երբեմն շատ ուշ, մարդը հասկանում է, որ իր կեանքի ամենամեծ սխալը ժամանակը ժամացոյցով չափելն է եղել, իսկ ժամանակը ժամացոյցի սլաքները չեն, այլ մարդիկ են, որոնց հանդիպեցինք, բայց չկարողացանք պահել: Այն ձեռքերը, որոնք մի ժամանակ բռնում էինք եւ այսօր այլեւս չկան: Այն սեղանն է, որի շուրջ նստած էինք բոլորս, իսկ հիմա որոշ աթոռներ դա-տարկ են: Այն ձայներն են, որոնք երբեւէ չէինք պատկերացնում, որ կարող են լռել, բայց այսօր ապրում են լոկ մեր յիշողութեան մէջ:



Տարիները մեր անցած ճանա-պարհն են: Դրանց մէջ կան յաղթա-նակներ, որոնցով հպարտացել ենք, պարտութիւններ, որոնց մասին լռել ենք, սխալներ, ո-րոնք երկար չենք կարողացել ներել ինքներս մեզ, եւ կորուստներ, ո-րոնց հետ սովո-րել ենք ապրել՝ ոչ թէ որովհետեւ ցամ անցել է, այլ

որովհետեւ մարդը երբեմն սովորում է իր ցաւը կրել այնպէս, ինչպէս զինուորն է կրում իր սային: Եւ ամէն տարի, երբ կեանքը մեզ եւս մէկ էջ է տալիս, մենք կար-ծես ականաչ կանգնում ենք մեր իսկ պատմութեան առաջ եւ հետ նայում: Ու հասկանում ենք՝ ինչքան բան է փոխուել: Բայց ամենացաւալին այն չէ, որ մենք մեծացել ենք: Ամենացաւալին այն է, որ որոշ բաներ այլեւս երբեք չեն վերադառնալ: Կարելի է նորից գումար վաստակել: Նոր աշխատանք գտնել: Նոր տուն կառուցել: Նոյնիսկ երբեմն կարելի է փշրուած կեանքը հաւաքել հատիկ-հատիկ եւ նորից սկսել գրեթէ զրոյից: Մարդը զարմանալի արարած է. նա կարող է ընկնել եւ նորից կանգնել, կորցնել եւ նորից ստեղծել, պարտուել եւ նորից փորձել: Բայց կայ մի բան, որի դէմ նոյնիսկ մարդկային ամենամեծ կամքը անզօր է՝ ժամանակը չի վերականգնում:

Մենք երբեք չենք վերադառնալ այն տարիքին, երբ թոււմ էր՝ ամբողջ կեան-քը դեռ առջեւում է: Երբ ապագան անծայրածիր էր, իսկ մահը՝ ինչ-որ հեռա-տր, գրեթէ վերացական հասկացութիւն: Այլեւս երբեք չենք նստի այն հին սե-ղանի շուրջ, որտեղ մեր բոլոր սիրելիները դեռ ողջ էին: Չենք լսի այն ձայները, որոնց ներկայութիւնը ժամանակին այնքան սովորական էր թոււմ, որ նոյնիսկ չէինք մտածում՝ ինչ մեծագոյն պարգէն է պարգապէս լսել դրանք: Իսկապէս, մարդը յաճախ կեանքի ամենամեծ արժէքները հասկանում է միայն այն ժա-մանակ, երբ դրանք դառնում են յիշողութիւն: Երբ սեղանի շուրջ մէկ աթոռ դա-տարկ է մնում: Երբ տան մէջ ինչ-որ մէկի քայլերի ձայնն այլեւս չի լսում: Երբ հեռախօսը լուռ է, որովհետեւ այն մարդը, ում զանգահարելու համար երբեք առիթ պէտք չէր, այլեւս չի պատասխանի: Այդ պահին հասկանում ես, որ կեանքի իրական հարստութիւնը երբեք այն չի եղել, ինչի հետեւից այդքան շտապել ես: Երկար ժամանակ վազել ենք միութեանից՝ կարծելով, թէ երբ ունենանք աւելի շատ, աւելի ապահով, վերջապէս ժամանակ կ'ունենանք ապրելու: Եւ յանկարծ մի օր հասկանում ենք, որ ամբողջ ընթացքում ժամա-նակն էր այն միակ հարստութիւնը, որը ծախսում էինք:

Ժամանակն այն միակ արժոյթն է, որը հնարաւոր չէ վաստակել երկրորդ անգամ: Ուրեմն պէտք չէ յետաձգել սերը, խնայել ջերմ խօսքերը: Սպասել յարմար պահին՝ զանգելու, հանդիպելու, ներելու, գրկելու համար: Որովհետեւ «յետոյ»-ն մարդու ամենավտանգատր պատրանքներից մէկն է: Ու թէեւ մենք վստահ ենք վաղուայ վրայ, որ կարծես վաղը մեզ է պատկանում: Վաղը միայն հնարաւորութիւն է, իսկ կեանքը տեղի է ունենում հիմա: Տարիների ընթացքում մենք սովորեցինք խօսել, բայց մոռացանք լսել: Իսկ զուցէ մեր ժամանակի ամենամեծ աղմուկը ձայնի մէջ չէ: Այն մտքերի մէջ է: Սոցիալական ցանցերը մարդուն տուեցին խօսելու անմախաղէպ հնարաւորութիւն: Իրաքանչիւր ոք կարող է կարծիք յայտնել, դատել, հակաճառել, վիրաւորել, նոյնիսկ՝ առանց որեւէ բան իմանալու: Բայց խօսքի ազատութիւնը դեռ խօսքի մշակոյթ չէ: Ինչ-պէս մեկնաբանելու հնարաւորութիւնը դեռ մտածելու կարողութիւն չէ: Այսօր շատերը ցանկանում են, որ իրենց լսեն, բայց քչերն են պատրաստ լսելու: Մենք յաճախ պատասխանում ենք՝ նախքան հասկանալու: Դատում ենք՝ նախքան ճանաչելու: Վիճում ենք՝ նախքան մտածելու: Եւ երբեմն մեր ամենամեծ խնդիրն այն չէ, որ ասելիք չունենք, այլ այն, որ չգիտենք՝ երբ պէտք է լռել: Որովհետեւ լռութիւնը միշտ չէ, որ անգօրութիւն է: Երբեմն լռութիւնն այն վիճակն է, երբ մարդը գիտի, որ իր խօսքը կարող է աւելի շատ վնասել, քան իր լռութիւնը: Որոշ խօսքերի պէտք է պատասխանել խօսքով: Որոշներին՝ փաստով: Իսկ որոշներին՝ լռութեամբ: Ոչ թէ որովհետեւ ասելիք չկայ, այլ որովհետեւ մարդու խօսքը յաճախ աւելի շատ բան է պատմում հէնց իր մասին, քան այն մարդու մասին, ում նա փորձում է դատել: Ինձ համար յատկապէս արժէքաւոր են այն մարդիկ, ովքեր կարողանում են չհամաձայնել՝ առանց վիրաւորելու, հարցնել՝ առանց նուաստացնելու, քննադատել՝ առանց ատելութեան: Այդ մարդիկ կա-րող են փոխել մեր կարծիքը՝ առանց մեզ փոքրացնելու: Եւ եթէ սոցիալական ցանցում որեւէ բան ինձ ուրախացնում է, ապա ոչ թէ հետետորդների քանակն է, ոչ թէ հաւանումների թիւը, այլ այն մարդկանց որակը, ովքեր կարողանում են այստեղ լինել մտքով, ոչ միայն ներկայութեամբ: Գուցէ հէնց սա է մեր ժամա-նակի փոքրիկ հակադարձումը մեծ աղմուկին: Այնպէս որ, սոցիալական ցան-ցը կարող է դառնալ մտքի, գիտելիքի, մշակոյթի, քաղաքակիրթ անհամաձայ-նութեան եւ մարդկային ջերմութեան տարածք:

Կեանքի որոշ ճշմարտութիւններ այնքան պարզ են, որ մենք դրանք հասկա-նում ենք միայն երկար ճանապարհ անցնելուց յետո: Որ խօսելուց առաջ լսել է պէտք, գրելուց առաջ՝ մտածել, աղօթելուց առաջ՝ ներել, ատելուց առաջ սիրել, նահանջելուց առաջ եւս մէկ անգամ փորձել, վերջապէս մեռնելուց առաջ՝ ապ-րել: Սա կեանքի մի ամբողջ փիլիսոփայութիւն է: Քանզի լսելը լռութիւն չէ միայն, այլ դիմացինի գոյութեան հանդէպ յարգանք: Երբ լսում ես, դու մի պահ դադա-րում ես լինել աշխարհի կենտրոնը եւ տեղ ես բացում ուրիշի աշխարհի հա-մար: Մտածելը նոյնպէս պարզապէս մտաւոր գործողութիւն չէ: Դա պատաս-խանատուութիւն է սեփական բառերի հանդէպ: Որովհետեւ խօսքը կարող է բուժել: Բայց կարող է նաեւ անդառնալիօրէն կոտրել, մարդուն ՝ տարիներով

ՍՈՒՐԷՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԳՂ, փրոֆեսոր

կառուցուած նրա աշխարհը փլուզել: Ուստի բարձրացրու ոչ թէ ձայնիդ բարձ-րութիւնը, այլ խօսքիդ արժէքը: Քանզի ծաղիկներիկ ամառապը չի անցնում: Անձրեւն է անցնում: Մարդկային հոգուն նոյնպէս միշտ չէ, որ պէտք է աղմուկ: Երբեմն նրան անհրաժեշտ է ընդամենը մի հանգիստ, ճիշդ պահին ասուած բառ: Իրական ուժը գոռալու մէջ չէ, այլ կարեւորն ասել՝ առանց ձայն բարձ-րացնելու:

Աղօթքը մարդու հոգու ամենաանկեղծ երկխօսութիւնն է Աստույ հետ: Բայց դժուար է մաքուր խօսել երկնքի հետ, երբ սիրտը լի է վիրաւորանքով: Ներելը չի նշանակում ասել, թէ տեղի ունեցածը ճիշտ էր կամ՝ մոռանալ, այլ նշանա-կում է հրաժարուել յաւերժ կրել այն բեռը, որը մէկ ուրիշը դրել է քո ուտերին: Երբեմն մենք տարիներով պատժում ենք ինքներս մեզ ուրիշների արածի հա-մար: Ոխր պահում ենք՝ կարծելով, թէ դրանով ինչ-որ բան ենք վերադարձնում դիմացինին: Բայց իրականում դիւր նախ եւ առաջ ապրում է մեր ներսում: Այդ պատճառով ներելը յաճախ ոչ թէ դիմացինին տրուած նուէր է, այլ ինքներս մեզ վերադարձնուած ազատութիւնը: Նաեւ պէտք է ատելուց առաջ սիրել, քան-զի ատելութիւնը հեշտ է, աղմկոտ եւ կործանարար: Իսկ սէրն է դժուար: Այն համբերութիւն է պահանջում: Քաջութիւն: Ներելու կարողութիւն: Երբեմն՝ եր-կար սպասելու ուժ: Նոյնը վերաբերում է կեանքին. նահանջելուց առաջ պէտք է եւս մէկ անգամ փորձել: Որովհետեւ երբեմն հէնց վերջին փորձն է բացում այն դուռը, որը մեզ բուժում էր՝ վերջնականապէս փակուած է: Նահանջը կարող է լինել վերջակէտ, իսկ փորձը՝ նորի սկիզբ:

Մեռնելուց առաջ՝ Բնականաբար ապրել է պէտք: Բայց գոյութիւն ունենալը դեռ ապրել չէ: Ապրել նշանակում է զգալ: Միտել: Ուրախանալ: Տխրել: Ծիծա-ղել: Լացել: Ներել: Հիանալ առաւօտով, նոյնիսկ եթէ այն սովորական է: Գնա-հատել մարդու ներկայութիւնը, քանի դեռ այն կայ: Իսկապէս, կեանքի իմաս-տը յաճախ փնտռում ենք մեծ իրադարձութիւնների մէջ, մինչդեռ կեանքի իրա-կան հրաշքը սովորաբար թաքնուած է ամենասովորական պահերի մէջ: Մի բաժակ սուրճի: Մօր կամ հօր ձայնի: Երեխայի ծիծաղի: Հին ընկերոջ զանգի: Արեւոտ առաւօտի: Տան լոյսի: Միտելի մարդու կողքին լուռ նստելու հնարաւո-րութեան: Մենք սովորականը սկսում ենք գնահատել միայն այն ժամանակ, երբ այն այլեւս սովորական չէ:

«Ես չեմ փորձում նկարագրել ապագան: Ես փորձում եմ կանխել այն» թեզի հեղինակ ամերիկացի գրող Ռեյ Բրեդերիքն նշում է, որ կեանքը փոխանցումա-վազք է: Ըստ նրա մենք կեանքը չենք տիրապետում, այլ ժամանակաւորապէս պահում ենք մեր ձեռքերում: Մեզինից առաջ ուրիշներն են ապրել, սիրել, կորցրել, ստեղծել: Մեզինից յետոյ ուրիշներն են շարունակելու: Եւ միայն Աստծուն է յայտ-նի՝ երբ եւ որտեղ է տեղի ունենալու այդ փոխանցումը: Գուցէ հէնց այդ պատ-ճառով մարդը պէտք է մտածի ոչ միայն այն մասին, թէ ինչ է վերցնում կեան-քից, այլեւ՝ ինչ է թողնում կեանքին: Քանզի մարդու իրական ժառանգութիւնը երբեմն ոչ թէ այն տունն է, որը նա կառուցել է, այլ այն մարդկանց սրտերն են, որոնց մէջ նա տուն է կառուցել: Իսկ լաւ ու բարեկեցիկ կեանք ապահովելու համար խորը գիտելիքներ է պէտք ունենալ: Գիտելիքից զրկուած հասարակու-թիւնը կորցնում է իր ապագան: Գիտելիքը պարզապէս կրթութիւն չէ, այլ ազա-տութիւն է, մտածելու, ճշմարտութիւնը կեղծիքից, փաստը՝ ասեկօսեկից, գիտու-թիւնը՝ ինքնավստահ տգիտութիւնից զատելու կարողութիւն: Պատմութիւնն ապացուցել է՝ հասարակութեանը կարելի է թուլացնել ոչ միայն զէնքով, այլ նրան մտածելու կարողութիւնից զրկելով: Այսինքն, գիտելիքի նկատմամբ ան-տարբերութիւնը, որ այսօր շատ է տարածուած, վտանգաւոր է:

Եթէ չգիտես, թէ որ նաւահանգիստն ես ուզում հասնել, ոչ մի քամի բարե-նպաստ էլ չի լինի: Մեփական նպատակը գտնելը երբեմն աւելի կարեւոր է, քան արագ շարժուելը, Որովհետեւ կարելի է շատ արագ գնալ եւ ամբողջ կեանքում սխալ ուղղութեամբ շարժուել: Պէտք է երբեմն քայլ անել, սխալուել, ընկնել, նորից բարձրանալ: Միայն նոյնպէս ճանապարհի մի մասն է: Երբեմն պէտք է հասկանալ, թէ ինչ չես ուզում, որպէսզի վերջապէս գտնես այն, ինչ իսկապէս քոն է: Հարցերի հարցն է . իսկ ես ինքս գիտե՞մ, թէ ուր եմ գնում»: Չէ որ վեր-ջում մնում է ոչ թէ տարիների թիւը, այլ դրանց իմաստը եւ փորձել շնորհակալ լինել կեանքում: Որովհետեւ կեանքի արժէքը որոշում է ոչ թէ նրա ունեցած տարիների քանակով, այլ այդ տարիների մէջ ապրած կեանքի խորութեամբ: Որովհետեւ մի օր հասկանալու ենք՝ ամենաթանկ բաները երբեք այն չեն եղել, որոնց համար այդքան վազել ենք: Ամենաթանկը եղել է ժամանակը, որն ստա-ցել ենք միայն ժամանակաւորապէս: Այսօր, ինքս ինձ ուզում եմ հարցնել՝ ոչ թէ քանի տարեկան եմ, այլ ի՞նչ եմ արել այդ տարիների հետ եւ ինչ եմ թողել իմ հետեւից: Տարիներն իսկապէս պարզապէս թիւ չեն: Դրանք մեր կեանքի լուռ վկաներն են: Եւ զուցէ կեանքի վերջնական իմաստը հէնց սա է՝ երբ ժամանա-կը մեզանից մէկը միւսի հետեւից տանում է ամէն ինչ, մենք կարողանանք նրան դիմաւորել ոչ թէ դատարկ ձեռքերով, այլ մարդկանց թողած սիրով, ապրած կեանքի արժանապատուութեամբ եւ մեր ներսում պահպանած լոյսով: Ուստի հարկաւոր է ապրել, հիմա, սիրել, ներել, գրկել, սովորել հէնց հիմա: Որովհետեւ վաղը դեռ ոչ մէկիս խոստացուած չէ: Իսկ այսօրը դեռ մերն է:

07.09.2026, Երեւան

Խմբագրութեան համակարգող՝	Դոկտ. Արշալիր ԿԵՆՏՆԵԱՆ (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Նիւ Ջըրզի)
Խմբագրական Կազմ	
Յակոբ ԱՆՏԻՔԵԱՆ	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուօ)
Զաւէն Գրիգորեան	(Աթէնք)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Ֆաւցէ	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A. Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

Մեծ Երասի Եամբուն Ուղեւորները

ՎԱՐՈՒԺԱՆ ՊԵՏԻԿԵԱՆ

Հալեպ, Յուլիս 6, 1927 - Նիկոսիա, Մայիս 19, 1989

ՍՕՍԻ ՊԵՏԻԿԵԱՆ

Նիկոսիա, Ապրիլ 26, 1930 - Նիկոսիա, Յունուար 26, 2002

ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԹԻ ՅԻՇԵՆՔ ՄԵՐ ԵՐԱԽՏԱԻՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԸ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹԻՒՆԸ

Անցագրի անունով Դանիել Պետիկեան, մկրտութեան քուրդով՝ Դանիել-Վարուժան Պետիկեան, գրչանունով՝ Վարուժան Պետիկեան: Ծնած է Հալեպ, Յուլիս 6, 1927ին, արհեստաւոր համեստ ընտանեկան յարկի մը տակ: Մեքաստացի հայրը՝ Հանի Գալուստը, վարպետ երկաթագործ էր եւ կ'աշխատէր DHP երկաթուղային ընկերութեան մէջ: Հաւատաւոր հնչակեան էր, թունդ հայրենասէր եւ իր գործօն մասնակցութիւնը կը բերէր հալէպահայ ազգային-միութեանական կեանքին: Մայրը՝ Լուսիա (Շահինեան) կը մնայ տանտիկին մինչեւ իր մահը՝ Նիկոսիոյ մէջ 86 տարեկանին: Ունէր մէկ քոյր եւ մէկ եղբայր:

Վարուժան նախակրթութիւնը ստանալէ ետք Հալէպ քաղաքի Կիլիկեան դպրոցին մէջ, երկու տարի (1943-45) կը յաճախէ տեղւոյն Լիսէ Ֆրանսէ վարժարանը՝ իբրեւ Հալէպահայ Ուսուցչական Միութեան սանը: 1945-ի Հոկտեմբերին կը մեկնի Կիպրոս՝ ուսանելու համար Նիկոսիոյ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ, զոր կ'աւարտէ 1949-ի Յունիսին:

Երկու տարի (1953-55) կը յաճախէ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը: Մասնագիտութեամբ՝ Լոնտոնէն վկայեալ հաշուապահ է:

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Կը վերադառնայ Հալէպ եւ ուսուցչութիւն կ'ընէ Կրթասիրաց վարժարանին մէջ՝ Գրիգոր Պողարեանի օրով: Ասկէ յետոյ, աւելի քան 40 տարի նուիրումով ու հաւատարմութեամբ կը ծառայէ ՀԲԸՄ-ի կրթական գործին՝ իբրեւ ուսուցիչ-պաշտօնեայ նախ Պէյրութի Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանին ու ապա՝ Նիկոսիոյ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ:

Մեպտեմբեր 20, 1953-ին, Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ կ'ամուսնանայ Օր Սօսի Պոյաճեանին հետ, որ իրեն մօտ կ'ընթացէ մշակ կը պաշտօնավարէ Բարեգործականի վարժարաններէն ներս, որպէս ուսուցչուի եւ տնօրէն: Բախտաւորութեամբ եւս երկու մանչ զաւակներով՝ Ռաֆֆի եւ Արա:

ԲԱՆԱՍՏԵՂԸ

Հայ լեզուի եւ գրականութեան ուսուցիչ ունեցած է Վահէ-Վահեանը, գրականագէտ Օննիկ Սարգիսեանը եւ Դոկտ. Յարութիւն Էսէկիւլեանը: Առաջին քերթողագիրքը լոյս տեսած է Պէյրութ 1969-ին, «Միտոյ եւ կարօտի աղանձներ» խորագիրով, եւ արժանացած է Թէքեան Մշակութային Միութեան «Հայկաշէն Ուզունեան» Գրական Մրցանակին: Երկրորդ



Հանդիպում՝ իրանահայ գրող Անդրանիկ Սարեանի հետ, Պէյրութ, 1971: Ձախէն աջ՝ Արամ Սեփեթեան, Վարուժան Պետիկեան, Անդրանիկ Սարեան, Վահէ-Վահեան եւ Օննիկ Սարգիսեան:

քերթողագիրքը, «Կենսաբեցում» խորագրուած է: Բանաստեղծ-արձակագիր Սիւրան Տէր Ստեփանեանն ու բանաստեղծ Զարեհ Մելքոնեանին գլխաւորութեամբ՝ եղած է ԹՄՄ «Շիրակ» ամսագրին հիմնադիրներէն եւ անոր առաջին աշխատակիցներէն մէկը: Բանաստեղծութիւններով եւ այլ յօդուածներով աշխատակցած է հայրենիքի եւ արտասահմանի բազմաթիւ թերթերուն ու մասնատրաբար՝ Պէյրութի «Զարթօնք»ին:

ՌԱՍԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆՔ

Մաս կազմած է ԹՄՄ-ի վարչական մարմիններուն եւ յանձնախումբերուն, ինչպէս նաեւ՝ «Շիրակ»-ի խմբագրական կազմին: Անդամ է ՌԱԿ Պէյրութի



Պսակաւոր Գիտութեանց տիտղոսը՝ քիմիագիտութեան մէջ: 1953-ի Մեպտեմբերին կ'ամուսնանայ Վարուժան Պետիկեանի հետ, որոնք կը բախտաւորուին երկու զաւակներով՝ Ռաֆֆի եւ Արա:

Կ'անդամակցի ՌԱԿ-ի շարքերուն շատ երիտասարդ տարիքին: Կը ստանձնէ կուսակցական պատասխանատու պաշտօններ ակմբային մակարդակով, ինչպէս՝ վարելով ՌԱԿ Շուշանիկ Ակումբի ատենապետութիւնը: Սօսին կը դառնայ առաջին կին անդամը ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութեան:

Ան խորապէս կը հաւատար որ հայ կինը հաւասարապէս պէտք է ծառայէ իր շրջանակին ու ժողովուրդին, տալով իր առաւելագոյնը: Դիշոյ այդ նկատառումով ալ, ան Շուշանիկի գործունէութիւնը ոչ միայն խթանեց ու զարգացուց, այլեւ որակաւորեց, որպէսզի իզական սեռը կոփուի եւ յոկուի թէ՛ իբրեւ հայ, թէ՛ իբրեւ քաղաքացի եւ թէ՛ իբրեւ մարդ:

1953-ի Հոկտեմբերէն սկսեալ կը պաշտօնավարէ ՀԲԸՄ-ի Դարուի Յակոբեան աղջկանց երկրորդական վարժարանին մէջ նախ որպէս գիտութեան եւ ուսողութեան ուսուցչուի, ապա որպէս աւագ ուսուցչուի եւ վերջապէս վարժարանի տնօրէնուի փոխարինելով՝ Զարեհ Մելքոնեանը, որ Ամերիկա կը գործուղուէր ծառայելու դարձեալ ՀԲԸՄ-ին: Հոս արձանագրեց որ Դարուի Յակոբեան վարժարանը ունեցած է միշտ ալ տնօրէններու պատկառելի շարք մը՝ Մարտիրոս Տէր Ստեփանեան, Պարգեւ Շահպագ, Արտաշէս Սարգիսեան, Յակոբ Պուճիքանեան, Պարգեւ Տէր Յովհաննէսեան, Խաչէր Գալուստեան, Արա Թօփեան, Վահէ-Վահեան (տեսուչ) եւ Զարեհ Մելքոնեան: Ան մնաց տնօրէնի պաշտօնին մինչեւ 1975 թուականը՝ Լիբանանը ցնցող ծանօթ դէպքերուն առաջին տարին: 1982-ին կը նշանակուի Մելգոնեան Կրթական Հաստատութեան տնօրէն: Հակառակ ըլլալով գիտութեան մարդ, Պետիկեան



եղաւ նոյնքան արուեստի, մշակոյթի ու պատմութեան ուսուցչուի մը, երբ վերջին տարիներուն ալ Մելգոնեանէն ներս դասաւանդեց հայոց պատմութիւն եւ իր պատրաստած նօթերով կազմեց դասագիրք մը, որ ցարդ կը մնայ անտիպ:

Իր տեսչական պաշտօնին բերումով քաջալերած է աշակերտուիները միանալու ռամկավար ազատական շարքերը: Այսօր մենք է թիւր իզական սեռի ռամկավար ազատական շարքային ընկերուիներուն, որոնք իրենց հետքը ձգած են ոչ միայն կուսակցական կեանքի մէջ զանազան պարտականութիւններով, այլեւ՝ պատասխանատու պաշտօններով մաս կը կազմեն ազգային, կրթական ու բարեսիրական կեանքին: Անոնք այս աշխատանքը կ'ընեն անսակարկ համոզումով:

ԴԱՏԱԽՈՐ Կ՛ՈՒՉՈՒԻ...

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՅԱԿՈՐ ԱՐԵՏԻՔԵԱՆ

Անոնք՝ որոնք Պէյրութի, Լոս Անճելըսի հայկական թատերասրահներուն, բայց մանաւանդ Երեւանի «Յակոբ Պարոնեան» թատրոնին մէջ առիթ ունեցեր են դիտելու յոյն թատերագիր Տիմիթրիս Փսաթասի (Dimitris Psathas) գլոխգործոցը՝ «Ստախոս կ'ուզուի», կամ, «Պահանջում է ստախոս» թատերական ներկայացումը, անպայման պիտի յիշեն, որ այնքան փնտռուած «Ստախոսը» շուտով, շատ շուտով կը գտնուի, բայց այնքան սուտ եւ սուտեր կը խօսի, որ ի վերջոյ, ինչպէս կ'ըսեն արեւելահայերը, կը խճճուի անոնց մէջ, մէկ սուտը կը խառնէ միւսին այնքան, որ այլեւս ինքն ալ չի հաւատար իր ստախոս ըլլալուն եւ սեփական սուտերը կ'ընդունի ճշմարտութեան տեղ, իսկ վերջաւորութեան՝ ճշմարտութիւնը՝ որպէս սուտ:

Աւելի քան երեք տարի է, որ Նիքոլ Փաշինեանը, իր հետեւորդներն ու իր սեփական արդարադատութիւնը, աղանդաւորական պայքար մղեցին Հայ Առաքելական եկեղեցիին դէմ, աշխատեցան վարկաբեկել բարձրաստիճան մեր եկեղեցականները՝ սկսելով Ամենայն Հայոց Հայրապետն ու հասնելով եպիսկոպոսական կազմին, քահանաներուն, նոյնիսկ՝ սարկաւազներուն, առաւել՝ Հայ եկեղեցոյ բարերարներուն ու պաշտպաններուն, հաւատացեալներուն: Անձամբ ինքը՝ Փաշինեանը, ժպրհեցաւ «չուլան» կոչել մեր սրբաւերտ տաճարները, որ արեւելահայ խօսոյթով կը նշանակէ աւելորդ իրեր դնելու տեղ, խորդանոց, քիթխիթ, զիպիլանոց:

Չեմ ուզեր կրկին խորանալ սրբապիղծ, ազգուրաց, հակաքրիստոնէական այդ քաղաքականութեան պատճառահետեւանքային հանգամանքներուն մէջ, որուն հանգամանալից անդրադարձեր ենք «Պայքար»ի մէջ, միշտ շեշտելով, որ կարելորդ ո'չ թէ ժամանակաւոր ու պատահական որեւէ պաշտօնեայի, այլ՝ մեր ժողովուրդին հաւաքական կեցուածքն է, վերաբերումը ազգային ինքնութեան քայքայման, ազգային մեր պետականութեան ստորկացման ձգտող այդ ոտնձգութիւններուն նկատմամբ:

Համաժողովրդային այդ կեցուածքը, համահայկական մերժումը այդ ոտնձգութիւններուն հանդէպ, գումարումովը հանդերձ Հայ եկեղեցոյ հանդէպ խորին յարգանք ունեցող համաքրիստոնէական կազմակերպութիւններու ապշանքը, եղաւ աւելի քան տպաւորիչ, իր ազդեցութեամբ՝ որոշիչ, նոյնիսկ այն պայմաններուն տակ, որ սրբապիղծ անձը, դեռ երէկ, Յովհաննայ հնաբոյր տաճարին մէջ կը շարունակէր իր բարբաջանքները Հայ եկեղեցոյ, Էջմիածնակեդրոն Մայր աթոռի դէմ:

Պարզապէս հաւասարակշռութիւնը կորսնցուցած մարդը, որ նստած է ՀՀ կառավարութեան պետի աթոռին, ձեւանալով օրինապահ, Սահմանադրութիւն յարգող եւ արդարասէր՝ ան դատարան տարաւ Ամենայն Հայոց կաթողիկոսին ու վեց արքեպիսկոպոսներին պատժի ենթարկելու գործ մը, case մը, ինչպէս պիտի ըսէին ամերիկացիները, ըստ որուն՝ Հայոց Հայրապետը եւ Եկեղեցական Գերագոյն Խորհուրդի անդամ եպիսկոպոսները կարգալոյծ հռչակեր էին տիրադաւ մը՝ Արագածոտնի թեմի նախկին առաջնորդ, այժմ կարգալոյծ Արման Սարոյեանը, որ միացեր էր նոյնինքն զինք եպիսկոպոս ձեռնադրած Վեհափառ Հայրապետի դէմ Ն. Փաշինեանի շղթայագերծած արշաւանքին՝ հրաժարականի պահանջով:

Դատական գործընթացը սկսաւ Վաղարշապատի (Էջմիածին) դատարանին մէջ՝ դատաւոր Յակոբ Մանուկեանի նախագահութեամբ, աւելի ճիշդ հազիւ սկսած՝ հնչեց դատաւորին ինքնաբացարկը, այն պատճառաբանութեամբ, որ մեղադրուողին պաշտպան փաստաբան Արա Ջօհրապեանը ատենին իրեն շնորհած է դատաւոր դառնալու վկայական, հետեւաբար իր արձակելիք վճիռը կրնայ մեկնաբանուիլ կողմնակալութեամբ:

Յայտնապէս, ինչպէս կռահեց ընթերցողս, դատաւոր Յ. Մանուկեանը չէ ուզած մասնակցիլ Հայ եկեղեցիին, Վեհափառին ու եպիսկոպոսներին դէմ շինծու, ապօրինի, պարսաւելի դատական նիստի մը: Անշուշտ, պիտի մտածէ ընթերցողս, Մանուկեանը կրնար նիստը բանալ «մեղադրեալներու» բացակայութեան եւ... անմեղ հռչակել «մեղադրեալները»: Սակայն, ինչպէս կ'ըսէ ժողովուրդը, առիծի սիրտ կերած պէտք էր ըլլար ան այդպիսի քայլ կատարելու համար՝ զրկուիլ պաշտօնէն, եկամուտներէն եւ, աւելին, ենթարկուիլ Փաշինեանի դաժան պատիժներուն: Չէ՞ որ այդ նոյն անձը, ամիսներ առաջ հրապարակաւ յայտարարեր էր. «Այդ ո՞ր դատաւորը կարող է իմ ասածը չանել»...

Սակայն, բնաւ աւելորդ չէ ընթերցողներուն տեղեկացնել, որ նիստը սկսելէ առաջ դատարան մուտք գործեր էր, 4 ոստիկաններու ուղեկցութեամբ, կարգալոյծ տիրադաւր՝ անցնելով սովորական քաղաքացիներու սուլոցներուն ու թրցներուն մէջէն, ուղեկցուած՝ «դաւաճան-դաւաճան» մակդիրներով:

Այնպէս որ, ժողովուրդն ալ, անգամ մը եւս, ի՞ր խօսքը ըսած եղաւ, զգուշացնելով բոլորին, ա՛յդ պիտի ըլլայ բոլոր սրբապիղծներուն ճակատագիրը:

Բայց հոն չաւարտեցաւ: Նիքոլը Նիքոլ չէր ըլլար, եթէ կառչած չմնար իր սպառնալիքէն: Դատաւոր Յ. Մանուկեանի չկամութեան յաջորդեց Արմաւիրի մարզի դատաւոր Սերժ Ռուշանեանի խուսափումը, որ գործը *հատալէ* ըրաւ Երեւանի վճռաբեկ դատարանի, իսկ վերջինը՝ դարձեալ Ռուշանեանին, ան ալ իր հերթին՝ Վահագն Մելիքեանին, որ Մեպտեմբեր 8-ին երկրորդ անգամ ընդունելով case-ը՝ մակագրեց գայն, այսինքն՝ ձգեց «խաղի» մէջ, ֆուլպոյլի դաշտին վրայ:

Հետեւինք այդ «խաղին», որ ամօթն ու մուրն է մեր Եկեղեցիին, ազգին, պետութեան:

Իմ տեղեկութիւններով, Ն. Փաշինեանը երդում տուած է (եթէ անոր երդումները որեւէ է իմաստ ունին) շարունակելու փնտռուտը իր «սիրտի դատաւորը» գտնելու, որ պիտի համարձակի Վեհափառ Հայրապետը մեր միւս եկեղեցականներուն հետ բանտ տանելու:

Ո՛չ, ասիկա Ստախոսի փնտռութիւն չի՝ նմանի: Սուտին պոչը, ինչպէս կ'ըսէ մեր ժողովուրդը, ստախօսին պոչը կարճ է, ինքն իր մէջ կը խճճուի, կը խառնուի եւ, ինչպէս թատրոնի բեմին վրայ, կը պարզուի ու բոլորն ալ, թէ՛ ստախօսը, թէ՛ խաբուողները կ'ուրախանան: Սակայն Փաշինեանին ձեռնարկած գործերը բնաւ չեն աւարտիր ուրախութեամբ, ծիծաղով, հաշտութեամբ: Ըստ երեւոյթին ան վերջապէս գտած է իր ուզած դատաւորը, կրկին՝ Սերժ Ռուշանեանը:

Բոլորս պէտք է խղճանք «վերագտնուած» դատաւորին:

Երեւան

ԽԱՉԻՆ ԱՌՁԵՒ՝ ՆԵՐՈՒՄԻ ՍՐԲԱԶԱՆ ԴԱՍԸ

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՊԱՐՄԱՄԵԱՆ

Խաչվերացի սուրբ տօնը ամեն տարի մեզ դարձեալ կը բերէ Սուրբ եւ Կեանարար Խաչին դիմաց՝ այն խորախորհուրդ սրբութեան առջեւ, ուր անճառ լոյսով կը փայլի Աստուծոյ սէրը, ողորմութիւնն ու փրկագործ կամքը: Քրիստոնեային համար Խաչը սոսկ տառապանքի կամ մահուան խորհրդանիշ մը չէ. ան կեանքի ծառ է, յաղթանակի նշան եւ փրկութեան դրօշմ: Անիկա այն սրբազան կնիքն է, որով մարդկութիւնը տեսաւ ոչ միայն զոհաբերութեան ահաւոր խորհուրդը, այլ նաեւ յոյսի արշալոյսը, վերականգնումի ճամբան եւ նոր կեանքի աւետիսը:

Խաչին վրայ, երբ մեր Տէրը Յիսուս Քրիստոս մարդկային անիրաւութեան, ցաւի եւ լքումի խաւարին մէջ կը գտնուէր, Իր շրթներէն բխեց այն աղօթքը, որ դարերէ ի վեր կը հնչէ իբրեւ ներողամտութեան գերագոյն ու անգերազանցելի օրինակը. «Հա՛յր, ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր, թէ ինչ կ'ընեն» (Դուկաս 23.34): Այս խօսքերը լոկ արտասանուած բառեր չէին, այլ աստուածային սիրոյ կենդանի եւ անմահ վկայութիւնը: Անոնց մէջ կը բացուի այն ճշմարտութիւնը, թէ սէրը ինչպէս կրնայ յաղթել ատելութեան, եւ ողորմութիւնը՝ գերազանցել դատապարտութիւնը:

Ահա հոս կը զարնէ Խաչվերացի հոգեւոր պատգամին բաբախուն սիրտը: Քրիստոս մեզ կը սորվեցնէ, թէ ներելը տկարութեան նշան չէ, այլ հոգեւոր զօրութեան բարձրագոյն արտայայտութիւնը: Մարդկային բնութիւնը յաճախ կը մղուի վիրատրանքին պատասխանելու վիրատրանքով, անիրաւութեան՝ խստութեամբ, եւ ցաւի՛ն՝ ոխով: Բայց Տէրը մեզի ցոյց տուաւ այլ ուղի մը՝ սիրոյ, համբերութեան, հեզութեան եւ ներողամտութեան ճանապարհը: Ան ոչ միայն խօսեցաւ ներելու մասին, այլ Իր կեանքով, Իր չարչարանքով եւ Իր Խաչով մարմնացուց այդ աստուածային ճշմարտութիւնը:

Ուստի Խաչվերացի խորհուրդը մեզ կը հրաւիրէ մտնելու մեր սրտերուն խորքը եւ լուռ հարց տալու մեր հոգիին. կրնա՞մք արդեօք ներել մեզ վիրատրոդները. կրնա՞մք մեր ներաշխարհէն արմատախիլ ընել դառնութիւնը, դիսակալութիւնը եւ այն թաքուն վերքերը, որոնք մեզ կը ծանրացնեն: Ներելը դիրքին չէ. անիկա ո՛չ չարը արդարացնել է, ո՛չ ալ վիշտը մոռացութեան տալ: Ճշմարիտ ներումը սրտի մաքրագործումն է, հոգիի ազատագրումը եւ ներքին խաղաղութեան աստիճանական վերագտնումը: Երբ մարդ կը մերժէ ներել, իր ցաւը կամաց-կամաց կը թափանցէ իր ամբողջ ներաշխարհին մէջ եւ արմատ կ'արձակէ իր հոգիին խորքերում. իսկ երբ կը ներէ, նոյն այդ վերքին մէջ բժշկութեան առաջին ծիւղերը կը սկսին ծաղկիլ:

Ներումին պտուղը անգնահատելի է նաեւ անձնական կեանքին մէջ: Դառնութիւնը կը մաշեցնէ մարդը ներսէն, մինչդեռ ներողամտութիւնը կը վերականգնէ, կը թեթեւցնէ եւ կը նորոգէ: Բարկութիւնն ու ոխը հոգին կը ծանրաբեռնեն, իսկ խաղաղ սիրտը մարդուն կու տայ ներքին զօրութիւն, հանգստութիւն եւ լոյս: Ով որ կը ներէ, ան նախ եւ առաջ ինքզինք կ'ազատէ ատելութեան շղթաներէն: Ահա թէ ինչու ներումը ոչ միայն քրիստոնէական պատուէր է, այլեւ հոգեւոր բժշկութիւն, ներքին վերածնունդ եւ շնորհքի գործ:

Խաչին առջեւ մենք նաեւ կը սորվինք, թէ ներումը իր մէջ յարութեան զօրութիւն կը կրէ: Քրիստոս, որ խաչուեցաւ, խոնարհեցաւ եւ մինչեւ մահ հնազանդեցաւ, ի վերջոյ Յարութեամբ յաղթեց մահուան ու խաւարին: Նոյնպէս ալ մարդը, երբ իր վերքերէն վեր բարձրանալով կը ներէ, իր սրտին մէջ նոր կեանք մը կը ծնի: Ներողամտութիւնը մարդը չի նուաստացնէր, այլ կը բարձրացնէ: Ան մարդը չի պարպեր, այլ կը լեցնէ աստուածային խաղաղութեամբ, անուշ լոյսութեամբ եւ շնորհքի անտեսանելի զօրութեամբ:

Մարտահրաւերներով ու նաեւ կարելիութիւններով լեցուն այս օրերուն մեր հայ ժողովուրդը, թերեւս աւելի քան երբեք, կարիքն ունի Խաչին առջեւ կանգնելու, նորոգուելու, սիրտը մաքրագործելու եւ աստուածային ողորմութեան մէջ զօրանալու: Ազգային մեր կեանքին մէջ կուտակուած վիշտերը, կորուստները, տառապանքները եւ պառակտումները յաճախ կը յոգնեցնեն մեր հոգիները ու կը ծանրացնեն մեր սրտերը: Բայց Սուրբ Խաչին խորհուրդը մեզ կը հրաւիրէ, որ չմնանք դառնութեան, յուսահատութեան եւ ներքին խռովութեան խաւարին մէջ, այլ ապաւինինք Խաչեալ եւ Յարուցեալ Տիրոջը, որ միայն կրնայ բժշկել վիրաւոր սրտերը եւ նորոգել խոնարհ հոգիները: Երբ մեր ժողովուրդը հաւատքով մօտենայ Խաչին, ապաշխարութեամբ դառնայ առ Աստուած եւ ներողամտութեան ու հաշտութեան ոգիով վերագտնէ իր հոգեւոր դիմագիծը, այն ատեն աստուածային շնորհքը պիտի զօրացնէ մեզ, պիտի հաստատէ մեր միութիւնը եւ պիտի պայծառացնէ մեր ազգային ու եկեղեցական կեանքը:

Արդ, Խաչվերացի այս սուրբ տօնը թող ըլլայ մեր ժողովուրդին համար հոգեւոր արթնութեան կանչ, սրտի դարձի պահ եւ շնորհաբաշխ նորոգութեան օրհնեալ առիթ, որպէսզի իբրեւ հաւատացեալ ազգ վերագտնենք սիրոյ, միութեան եւ Քրիստոսի պարգեւած խաղաղութեան ճամբան:

Խաչվերացի այս սուրբ տօնին եկէք խոր ակնածանքով նայինք Խաչեալին եւ աղերսենք, որ Ան մեզի պարգեւէ ներող, հեզ, խոնարհ եւ խաղաղ սիրտ: Թող մեր կեանքը դառնայ սիրոյ, հաշտութեան եւ ողորմութեան կենդանի վկայութիւն՝ մեր ընտանիքներուն մէջ, մեր եկեղեցական ծառայութեան մէջ եւ մեր բոլոր մարդկային յարաբերութիւններուն մէջ: Թող երբեք չմոռնանք, թէ ճշմարիտ քրիստոնեան ոչ միայն Խաչը կը մեծարէ, այլ Խաչին առջեւ կը սորվի սիրել, ներել, խոնարհիլ եւ նորոգուիլ:

Խաչվերացի տօնը մեզի համար ըլլայ ապաշխարութեան, հաշտութեան եւ ներողամտութեան նոր սկիզբ: Որովհետեւ երբ մենք կը ներենք, այն ատեն աւելի ճշմարիտ կերպով կը պատկանինք Խաչեալ եւ Յարուցեալ Քրիստոսին:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈՎԱՆՏԻՒՆ ՆԵՐՔՈՅ ՀԱՅԸ ԵՒ ԼԻՐԱՆԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

Սեպտեմբերի 2-ի երեկոն Էշրեֆիեի Ժաթաուի Հայ Կաթողիկե Պատրիարքարանին մեջ, սովորական ընդունելութեան մը սահմաններէն անդին անցնող խորհուրդ մը ունէր: Պատմութեան ընթացքին բազմիցս իր դռները բացած այս օճախը այդ երեկոյ իր հովանիին տակ համախմբեց Լիբանանի մամուլի պատասխանատուները՝ հայ եկեղեցական եւ համայնքային կեանքին ու լիբանանեան հասարակութեան միջեւ գոյութիւն ունեցող կապերուն նոր շեշտադրում մը տալով:



Ընթրիքը կազմակերպած էր Ն.Ե. եւ Գերերջ. Տ. Ռաֆայէլ Պետրոս ԻԱ Միմասեան՝ Կիլիկիոյ Հայ Կաթողիկե Եկեղեցւոյ Կաթողիկոս-Պատրիարքը: Անոր նախաձեռնութեամբ Հայ Կաթողիկե Պատրիարքարանի սեղանին շուրջ այդ երեկոյ հանդիպեցան պետական պատասխանատուներ, մամուլի եւ լրատուամիջոցներու ղեկավարներ, եկեղեցականներ եւ հանրային կեանքի տարբեր ոլորտներու ներկայացուցիչներ: Ներկայ էին նաեւ Հանրապետութեան Նախագահի ներկայացուցիչը՝ Առաջին Տիկին Նիմաթ Աուն, Տեղեկատուութեան նախարար Փոլ Մորկոս, եւ լիբանանեան մամուլի եւ հեռուստաընկերութեանց ներկայացուցիչներ:

Այս բազմամարդ ներկայութեան մէջ իր կարեւոր տեղը ունէր նաեւ Չմմառի վանքի հոգեւորականութիւնը, ի ներկայութեամբ Չմմառի վանքի վանահայր եւ Պատրիարքական Հոգեւորականութեան Միաբանութեան պատրիարքական փոխանորդ Մոնս. Մաշտոց Զաքարեան, ինչպէս նաեւ պատրիարքական հոգեւորականներ եւ ծխական քահանաներ:

Սակայն այս հանդիպման իրական պատկերը ամբողջացնողը լիբանանեան մամուլի լայն ներկայութիւնն էր: Տպագիր մամուլի, հեռատեսիլի, ձայնասփիւռի, առցանց լրատուամիջոցներու եւ ընկերային ցանցերու ներկայացուցիչներուն ներկայութիւնը կը վկայէր, որ մամուլը, իր բազմազան ձեւերով հանդերձ, տակաւին կը պահպանէ իր առանձնապատուկ դերը Լիբանանի հանրային կեանքին մէջ:

Հայերուն համար մամուլը երբեք եղած չէ միայն տեղեկութիւն փոխանցող միջոց մը: Լիբանանի մէջ հայկական մամուլի պատմութիւնը համայնքի պատմութեան անբաժան մէկ մասն է: Տասնամեակներ շարունակ հայ թերթը եղած է հայուն ձայնը, յիշողութեան պահապանը, մշակոյթի փոխանցողը եւ ազգային ինքնութեան ամրապնդման միջոցը: Այդ պատճառով ալ Պատրիարքարանի մէջ լիբանանեան մամուլի ներկայացուցիչներուն շուրջ մէկ սեղանի համախմբումը ունէր աւելի խոր իմաստ, քան պարզապէս պաշտօնական ընթրիքի մը բնոյթը:

Այդ երեկոյ երկու աշխարհներ իրարու կը հանդիպէին՝ Եկեղեցին եւ մամուլը, հոգեւոր ժառանգութիւնը եւ հանրային խօսքը, յիշողութիւնը եւ ներկան: Հայ Կաթողիկե Եկեղեցին, որ իր գոյութեամբ իսկ Լիբանանի պատմութեան ու ընկերային հիստուածքին մաս կը կազմէ, իր դռները բացած էր այն մարդոց առջեւ, որոնք ամէնօրեայ աշխատանքով կը ձեւաւորեն երկրի հանրային կարծիքը եւ կը փոխանցեն անոր ձայնը:

Եւ գուցէ այս հանդիպման ամէնէն յատկանշական խորհուրդը հոն էր. Լիբանանի մէջ հայը միայն անցեալ մը չէ, այլ երկրի ներկային մէջ իր ձայնն ու ներկայութիւնը ունեցող համայնք մը: Իսկ մամուլը, իր հերթին, այն կամուրջն է, որ այդ ներկայութիւնը կը փոխանցէ լիբանանեան լայն հասարակութեան:

Այդ երեկոյ Հայ Կաթողիկե Պատրիարքարանի դռները բաց էին մամուլին առջեւ: Բայց իրականութեան մէջ բացուողը միայն դուռ մը չէր. բաց էր պատմութեան մէկ էջը, ուր հայ համայնքը, իր Եկեղեցւոյ եւ իր երկարամեայ ներկայութեան միջոցով, դարձեալ կը հաստատէր իր տեղը Լիբանանի հանրային կեանքին մէջ:

Միջոցառումը սկսաւ Լիբանանի Հանրապետութեան պետական օրհներգով, որուն յաջորդեց Պատրիարքութեան Հանրային Կապերու եւ Լրատուութեան բաժանմունքի տնօրէն Ծարպել Պաստուրիի բացման խօսքը: Ան անդրադարձաւ հաւաքին նշանակութեան՝ շեշտելով, որ երեկոն կազմակերպուած էր ի պատիւ լիբանանեան մամուլին եւ անոր բազմամեայ առաքելութեան:

Այնուհետեւ խօսք առաւ Ն.Ա.Տ. Ռաֆայէլ Պետրոս ԻԱ Միմասեան Կաթողիկոս Պատրիարքը, որ ջերմօրէն ողջունեց ներկայ լրագրողներն ու լրատուամիջոցներու ներկայացուցիչները՝ ընդգծելով, որ անոնք այդ երեկոյ հիւր չէին, այլ «իրենց իսկ տան» մէջ էին:

Պատրիարքը իր խօսքը նախ ուղղեց Լիբանանի Հանրապետութեան Նախագահ, գորավար Ժոզէֆ Աունի ներկայացուցիչ՝ Առաջին Տիկին Նիքմաթ

Աունին, Տեղեկատուութեան նախարար դոկտ. Փոլ Մորկոսին, հոգեւորականներուն, պետական պատասխանատուներուն, լրատուամիջոցներու ներկայացուցիչներուն եւ լրագրողներուն:

Ան ընդգծեց, որ լրատուամիջոցներու աշխատանքը, յատկապէս մեր օրերուն, մեծ պատասխանատուութիւն կը պահանջէ: «Մենք կը տեսնենք ձեր քրտնաջան աշխատանքը, կը գնահատենք ձեր առաքելութիւնը եւ կը գիտակցինք այն մեծ պատասխանատուութիւնը, որ կը կրէք ամէն օր», ըսաւ Պատրիարքը:

Իր խօսքին մէջ ան հետաքրքրական զուգահեռ մը գծեց քահանայական առաքելութեան եւ մամուլի կոչումին միջեւ: Ինչպէս իսկական քահանայական կեանքը փառքի կամ դիրքի չի ձգտիր, այլ կը հետեւի Քրիստոսի օրինակին եւ մարդկութեան կը փոխանցէ Բարի Լուրը, նոյնպէս լրատուամիջոցը, երբ կը բարձրանայ իր կոչումին բուն էութեան, կը դադրի պարզապէս տեղեկութիւն փոխանցող միջոց մը ըլլալէ եւ կը վերածուի առաքելութեան:



Այդ առաքելութեան հիմքին վրայ, ըստ Պատրիարքին, կը գտնուին ճշմարտութեան որոնումը, մարդկային արժանապատուութեան պաշտպանութիւնը եւ հասարակութեան ու ազգին ծառայութիւնը: Մամուլը, իր բարձրագոյն առաքելութեան մէջ, հետեւաբար ոչ միայն կը պատմէ ժամանակը, այլեւ կը դառնայ ժամանակի վկան, հասարակութեան խիղճը եւ երբեմն՝ անոր ձայնը:

Եւ այդ երեկոյ, Հայ Կաթողիկե Պատրիարքարանի յարկին տակ, այդ ձայնին ուղղուած պատգամը եղաւ պարզ, բայց խոր իմաստով:

«Ուստի, այս երեկոյ կը ցանկանք պարզութեամբ եւ ջերմութեամբ ըսել ձեզի՝ շնորհակալութիւն»:

Այս «շնորհակալութիւն»-ը կը դառնար երեկոյին ամէնէն մարդկային ու խորհրդանշական եզրափակումը՝ ուղղուած բոլոր անոնց, որոնք իրենց մասնագիտական պարտականութիւնը կը վերածեն հասարակական ծառայութեան եւ ճշմարտութեան որոնումին:



Պատրիարք Միմասեան իր երախտագիտութիւնը յայտնելով լիբանանեան մամուլին՝ յայտնեց. «Շնորհակալութիւն կը յայտնենք մեր Պատրիարքութեան եւ Եկեղեցւոյ հանդէպ տարուան ընթացքին ձեր բերած ամբողջ ներդրումին համար՝ իւրաքանչիւր պատմութեան, որ ներկայացուցիք, իւրաքանչիւր իրադարձութեան, որ լուսաբանեցիք, եւ իւրաքանչիւր հարթակի, որ տրամադրեցիք՝ օգնելով մեր առաքելութեան հասնելու մարդոց»:

Առանձնապատուկ երախտագիտութեան արժանացուց ան Հոռմի մէջ տեղի ունեցած պատմական իրադարձութեան՝ Սուրբ Իգնատիոս Մալոյեանի սրբադասման արարողութեան բացառիկ լուսաբանումը: Այդ լուսաբանումը, Պատրիարքին խօսքով, առիթ տուաւ տարածելու այն նահատակին վկայութիւնը, որ երբեք չդաւաճանեց իր հաւատքին, եւ անոր պատմութիւնը հասցնելու լիբանանցիներու տունները՝ միաժամանակ զայն ներկայացնելով ամբողջ աշխարհին:



ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՄ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին



ՄԱԼԽԱԶ ԶԱԶԸ՝ ՏԱՆԻՔՈՒՄ

Khachaturian Rooftop-ը նոր էջ է բացում Երեւանի մշակութային կեանքում՝ երաժշտութիւնը տեղափոխելով քաղաքի ամենատպալուրիչ տեսարաններից մէկի ներքոյ։ Բաց երկինք, Երեւանի համայնապատկեր եւ բարձրակարգ երաժշտութիւնգ այս հարթակը ստեղծուել է իւրայատուկ համերգային փորձառութիւնների համար՝ շարունակելով «Արամ Խաչատրեան» համերգասրահի մշակութային առաքելութիւնը նոր ձեւաչափով։

Բաց երկնքի տակ հնչեց սիրուած, իսկական երեւանցի Լեւոն Մալխասեանի եւ իր բենդի անկրկնելի ջազային կատարումները։ Ներկաները հնարաւորութիւն ունեցան վայելել Երեւանի աստղային երկինքն ու շրջակայ գեղատեսիլ շրջակայքը եւ այդ ամէնի հետ ընթոշխնել անկրկնելի ու հիասքանչ ամառային երեկոյ՝ լի ջազային հնչիւններով, որոնց մենակատարներն էին՝ Լեւոն Մալխասեան-դաշնամուր, Նիկողայոս Վարդանեան-կոնտրաբաս եւ Արամ Գեորգեան /Արամօ/-հարաւծային գործիքներ, վոկալ։

Յիշարժան երեկոյի բոլոր հիւրերին, համերգի ընթացքում «Հին Արեւի» գինիների հիւրասիրութիւնն եկաւ լրացնելու ամառանայի Մալխազ բենդի իւրօրինակ կատարումները։



ԱՐԵՆԻՈՒՄ ԿԸ ՀԻՄՆՈՒԻ ԳԻՆՈՒ ԹԱՆԳԱՐԱՆ



Վայոց ձորի մարզի Արեւի համայնքում գինու կլաստերի ստեղծման գործընթացի շրջանակում բաւական մեծ ներդրումներ են սպասուում։ Այն մի մասն է Զրօսաշրջութեան եւ մարզային ենթակառուցումների բարելաման խոշոր ծրագրի, որով նախատեսուում է 120 միլիոն եւրոյի ներդրում՝ Գորիսի, Արեւի, Ջերմուկի, Եղեգիսի, Դուինի, Գիւմրիի եւ Դիլիջանի զբօսաշրջային կլաստերների զարգացման համար։ Ծրագիրը նպատակ ունի խթանել գինու, առողջարանային, արկածային, մշակութային, կրթական եւ էկոզբօսաշրջութեան զարգացումը։ Արեւիի 9 բնակավայրերում նախատեսուում է ներդնել 12 մլն եւրօ։

«Արեւի համայնքային զարգացման» հիմնադրամի տնօրէն Սիւզան Մարգարեանը նշեց, որ «Արեւիի գինու կլաստեր» ներդրումային ծրագրի շրջանակում բազմաթիւ գաղափարներ են քննարկուում համայնքի իւրաքանչիւր բնակավայրում ներդրումային աշխատանքներ իրականացնելու համար։ Արեւի համայնքում ստեղծուելու է բաւական մեծ գինու թանգարան, որը պէտք է ամէն հարցում համապատասխանի միջազգային չափանիշներին։ Սա կարելու է ներդնել ինքնուրու համայնքի համար, վստահ ենք, որ զբօսաշրջային մեծ հոսք է ապահովելու, իսկ մենք ներկայացնելու շատ բան ունենք, չէ՞ որ Արեւին աշխարհի ամենահին գինեգործական կենտրոններից մէկն է», - ասաց Սիւզան Մարգարեանը։

Թանգարանում ներկայացուելու է Հայաստանի, մասնաւորապէս, Արեւիի գինեգործական պատմութիւնը, շեշտադրուելու է Արեւի-1 քարանձաւը, հնագիտական կարելու գտածոներ եւ այլն։ Թանգարանային համալիրում լինելու է սոմելիէ կենտրոն, ինչպէս նաեւ վաճառքի սրահ, որտեղ ներկայացուելու է Արեւի համայնքի գինեգործական արտադրանքի լաւագոյն տեսականին։

«ԴԱԼԱՆ ՖԵՍՏ»-Ը ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ԱՄԷՆԱՄԵԱՅ ՌՈԶ-ՓԱՌԱՏՕՆ ԳԻՒՄՐԻՈՒՄ

Գիւմրիում անցկացուած «Դալան Ֆեստ» ռոք-փառատօնը կարող է դառնալ ամէնամեայ։ Կազմակերպիչների եւ Գիւմրիի քաղաքապետարանի գնահատմամբ՝ փառատօնը հետաքրքրութիւն է առաջացրել ինչպէս քաղաքի բնակիչների, այնպէս էլ զբօսաշրջիկների շրջանում։ Եռօրեայ փառատօնի ընթացքում Գիւմրին վերածուել էր ռոք երաժշտութեան կենտրոնի. քաղաքի պատմական դալաները՝ կամարները, դարձել էին բացօթեայ բեմեր, որտեղ ելոյթ էին ունենում ռոք խմբեր։ «Մանուկեան» ընկերութեան նախաձեռնութեամբ եւ Զրօսաշրջութեան կոմիտէի աջակցութեամբ անցկացուած փառատօնը հնարաւորութիւն է տուել վերականգնելու քաղաքում ձեւաւորուած երաժշտական աւանդոյթներից մէկը։ Այս փառատօնը հետաքրքրութիւն ունի ինչպէս տեղացիներին,



րի, այնպէս էլ զբօսաշրջիկների համար ։

Գիւմրիում ռոք երաժշտութեան եւ կամարների տակ հաւաքուելու աւանդոյթը ձեւաւորուել է դեռեւս 1970-ականներին։ Այդ տարիներին քաղաքում ձեւաւորուած «Բամբիո» ռոք խումբը երաժշտասերների հետ հաւաքուում էր կամարների տակ եւ նուագում-երգում։ Խումբն ունի նաեւ «Կամարի տակ» երգը, որը հենց այդ միջավայրում միասին երգելու հրաւեր է։ Սա ոչ միայն փառատօնի կազմակերպում է, այլեւ աւանդոյթի վերականգնում։ «Բամբիո»-ի՝ կամարների տակ երգելու աւանդոյթը փոխանցուում է նոր երաժիշտներին։ Շէնքերի կամարաձեւ մուտքերում կրկին ռոք երաժշտութիւն է հնչում, ինչպէս 70-ականների Լենինականում։ Նման փառատօնները հնարաւորութիւն են տալիս երաժշտութիւնը դուրս բերել դահլիճներից, քաղաքի բնակիչներին եւ հիւրերին պարգեւել հետաքրքիր ու տարբերուող երեկոներ։ Դրանք նաեւ հարթակ են երիտասարդ ստեղծագործողների համար եւ նպաստում են արւեստի ու մշակոյթի միջավայրի ձեւաւորմանը։

«Դալան Ֆեստ»-ի շրջանակում քաղաքի պատմական դալաները վերածուել էին բացօթեայ բեմերի։ Փառատօնի ընթացքում ելոյթ են ունեցել բազմաթիւ ռոք խմբերը։ Կազմակերպիչների խօսքով՝ նախատեսուում է շարունակել աշխատանքը, որպէսզի «Դալան Ֆեստ»-ը դառնայ Գիւմրիում ամէնամեայ ռոք երաժշտական միջոցառում։


«ՖՐԵՄԿՕ» ԱՐԴԻ ԱՐՈՒԵՍԻՖԻ ՓԱՌԱՏՕՆ

Սպիտակում եւ Երեւանում օգոստոսի 21–28-ը Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարարութեան աջակցութեամբ «Երեխաների յատուկ ստեղծագործական կենտրոն» Պոպ-ը իրականացրեց «Ֆրեմկօ» արդի արուեստի եւ հոգեւոր ֆիլմերի միջազգային ներառական 13-րդ փառատօնը, որը տարիներ շարունակ Հայաստանի մշակութային կեանքի ամենասպասուած իրադարձութիւններից մէկն է։ Փառատօնը մէկ հարթակում միաւորում է թատրոնը, կինօն, երաժշտութիւնը, լուսանկարչութիւնը եւ ստեղծագործական-կրթական ծրագրերը՝ ստեղծելով մշակութային երկխօսութեան եւ նորարար գաղափարների տարածք։ Փառատօնի հանդիսատար բացման արարողութիւնը տեղի ունեցաւ Սպիտակի քաղաքային զբօսայգում։ Բացման գլխաւոր իրադարձութիւնը հանդիսացաւ Վանաձորի «Հորովել» երգի-պարի պետական անսամբլի «Տիրուհիները» թատերականացումը պարային ներկայացումը։

«Տիրուհիները» ներկայացումը հանդիսատեսին ներկայացրեց հայոց պատմութեան հինգ նշանաւոր թագուհիների՝ Զարուհու, Սաթնիկի, Փառանձեմի, Խոսրովանոյշի եւ Կեռանի կերպարները։ Բեմադրութիւնը ազգային մշակութային ժառանգութեան ժամանակակից մեկնաբանութիւն է, որն աւանդոյթն ու նորարարութիւնը միաւորում է մէկ ամբողջական արուեստային փորձառութեան մէջ։

Փառատօնի ութօրեայ ծրագրում ընդգրկուած էին համերգներ, միջազգային ֆիլմերի ցուցադրութիւններ եւ քննարկումներ, վարպետութեան դասեր, թատերական ներկայացումներ եւ ստեղծագործական հանդիպումներ, որոնք հնարաւորութիւն կը տան արուեստագէտներին եւ հանդիսատեսին բացայայտել ժամանակակից արուեստի բազմազան ուղղութիւնները։ Փառատօնի շրջանակում տեղի ունեցաւ փորձի փոխանակման հանդիպում չեխական «Մէկ աշխարհ» մարդու իրաւունքների միջազգային կինօփառատօնի ներկայացուցիչ Աննա Սկոչդոպոլովայի հետ։ Սպիտակում եւ Երեւանում անցկացուեցին իսրայէլցի լուսանկարիչ Դ. Բրիկմանի վարպետութեան դասը, ինչպէս նաեւ Երեւանում վարպետութեան դասով հանդէս եկաւ նաեւ ճանաչուած վրացի լուսանկարիչ Եւրի Մեչիտովը։ Փառատօնի ընթացքում ցուցադրուեցին 12 երկրի 30 ֆիլմ. դրանք մոտիվացնող աշխատանքներ են, որոնք անդրադառնում են կարելու սոցիալական խնդիրների, մարդասիրական արժեքներին եւ ներառականութեանը։

ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ



Վարդգէս Պետրոսեանի ծննդեան օրուայ առթիւ Հայաստան ազգային գրադարանի կայքում բացուել է գրողի կեանքին ու ստեղծագործական ժառանգութեանը նուիրուած գրականութեան առցանց ցուցադրութիւն՝ գրական ժառանգութիւն, որը շարունակում է ապրել։

Ներկայացում եւ Վարդգէս Պետրոսեանի տարբեր տարիների հրատարակութիւնները՝ հնարաւորութիւն տալով մէկ վայրում բացայայտել ու վերընթերցել գրողի ստեղծագործական ժառանգութիւնը։

Իսկ եթէ ցուցադրութեան ընթացքում գտնէք մի գիրք, որը կը ցանկանաք ընթերցել, իւրաքանչիւր գրքի շապիկին կից կարող էք գտնել առցանց պատւերի յղումը՝ Հայաստանի ազգային գրադարանում ընթերցելու համար։

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐԵԱՆ, Երեւան

ՈՐՈՒՋԳԻԾ ԴԻՄԱՆԿԱՐԻ ՀԱՄԱՐ

ՊԷՊՕ ՄԻՄՈՆԵԱՆ

(ՊԵՏՐՈՍ ԳԱԼԱՅՃԵԱՆ, 1937 - ԱԼԷԲԱՆՈՐԷԹԻ ՍԱՆՃԱՔ, ՊԷՐՈՒԹ, 2015)

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ԴՈԿՏ. ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ



«ՊԷպոյին խոհեմ ու լրջախոհ» մտածումներին իբրեւ ամբողջական մտաւորական տարիներ ի վեր կը գիտակցուէր ու կ'ըմբռնուէր, ում ալ հանդիպած եմ ու գրուցած այս կարծիքը կը բաժնէին: Եւ ուր ալ աշխատած, դասաւանդած է,- նախնական կրթութիւնը Նշան Փալանճեան ճեմարանի եւ Անքիլիասի դպրեվանքի մէջ ստանալէն ետք,- այնուհետեւ ֆրանսական «Մէն ժոզէֆ» համալսարանին արեւելեան դպրութեան կաճառի հայագիտական

ծիւղը աւարտած ըլլալով, այդ իսկ տարիներէն սկսեալ բարեհոգի մարդու, բանիմաց մտաւորականի կերպար մը դրոշմած է բարեկամներու, մտերիմներու, աշակերտաց յիշողութիւններու մէջ՝ մանաւանդ ասպարէզով կոչու՜մով մանկավարժ:

ՊԷյրոյի Սահակեան-Լեւոն Սկրտիչեան Քոլէճի տնօրինութիւնը ստանձնած տարիներէն իսկ զուգահեռաբար աշխատած է «Աշխարհ» օրաթերթի իբրեւ մշակութային խմբագիր, «Հիւսիսեան» հայագիտական ամբիոնին մէջ դասախօսած է Սփիւռքահայ գրականութիւն: Իսկ հետագային՝ 60-ական թուականներ «Նայիրի», «Զարթօնք», «Շիրակ», «Ահեկան» եւ սփիւռքեան /իբրանանեան/ մամուլին մէջ իր ստորագրած յօդուածները՝ գրադատական, մշակութային, հանրային խնդիրներու շուրջ միշտ ալ դրուատանքի արժանացած են: «Շնորհիւ այդ եւ հետագայ տարիներու իր անուրանալի բազմաճանգ ազգային, հանրային գործունէութեան շնորհիւ արժանացած է պատշաճ գնահատանքի ոչ միայն սփիւռքեան, այլեւ հայաստանեան իշխանութիւններու կողմէ /Մեծի Տանն կիլիկիոյ «Մեսրոպ Մաշտոց» շքանշան /2005/, «Մովսէս Խորենացի» շքանշան /2013/: Գնահատուած ըլլալը զինք բնաւ չէր յուզեր, ոչ ալ կը պարտաւորեցներ, ինչպէս կ'ըսէն «աւելին ընելու» ունակ էր ու կը յաջողէր: Օր մը այս մասին հարցուցած եմ. Նորէն նոյն բարեժպտութեամբ յարեց.

-Բնաւ չեմ մտածած, թէ ո՞վ, ե՞րբ, եւ մանաւանդ ինչո՞ւ կը գնահատեն զիս...

-Պարոն Սիմոնեան, նորէն արդէն քանիցս յիշած եմ ու ոչ աւելորդ անգամ կ'ուզեմ կրկնուիլ, ինչպէ՞ս ատենին Շաւարշ Միսաքեան ըսած է. «Թող գործը խօսի»:

-Ճիշդ ատ է: Շաւարշի խօսքը օրինակելի հանգամանք մը ունի, պատգամ մըն է, կը յիշեմ, կարծեմ յօդուածի մը մէջ գրած է, ատիկա հոգեկան պահանջ մըն է, եթէ գիտակցուի: Մնացեալը՝ «ինձմէ հեռու կը քալէ», - մեղմօրէն ժպիտը կարծես թէ «վիշտի բարձունքէն» կը ծորի...

«Իրմէ հեռու», բայց մօտ այն իրականութեանը, գրական, մշակութային՝ ի դիմաց իր աւանդած վատակի, որուն անխախտ ականատեսը ըլլալու «պարտաւորութիւն» ունինք. /բանաստեղծութիւններու ժողովածուներ, «Նախերգանք» /1968/, «Կանաչներու առասպելը» /1977/, «Մարդեղութիւն» /1981/, «Ծովին ճիւղ» /1991/, «Միջերկրականի լոյսերուն դիմաց» /2004/, արժանացած է Գեղորգ Մելիտինցիի գրական մրցանակին/: Անշուշտ, նկատելի տասնամեայ ընդմիջումները վկայութիւնն են «բանաստեղծութիւններ շատ չեն գրուիր» թեւաւոր դարձած խօսքին եւ կարծես թէ ՊԷպօ Սիմոնեան հետեւած է այս «արդարացուելիք» պատգամին: Անկէ ետք,- եւ զուգահեռաբար,- հեղինակած է արձակ հատորներ. «Հէքիաք Հայաստանի մասին» /1979/, «Մայրիներու արմատները» /1986/ եւ այլն:

Այս ամէնէն զատ,- բանաստեղծական եւ արձակ գրութիւններու պարունակէն դուրս,- ՊԷպօ Սիմոնեան մասն կազմած է «Լիբանանահայ գրողներու համախմբումին»: 2009 թ. ՊԷյրոյ գտնուելու ատեն իր առաջարկութեամբ զիս հրաւիրած էին հանդիպումի մը համախմբումին անդամներուն հետ, քննարկած էինք հայաստանեան եւ սփիւռքեան միջգրական յարաբերութիւններ ստեղծելու խնդիրը, եւ յատկապէս արեւմտահայերէնի,- ինչպէս եւ շեշտ ներկայացրած էի «ներմուծումը» հայաստանեան իրականութիւն,- նամանաւանդ ինչու ոչ, գրական միջավայր ու լայն հասարակութիւն,- եւ այդ «անօրինակ» նորութեանը ինք անդրադարձած է «Էջեր եւ նիւթեր գրականութենէն» /Ա հատոր, 2007/ հաւաքածուին մէջ: Հատորը կարդալէն ետք իրեն յայտնած եմ կարծիքս, յատկապէս քիչ մը «տրամադիր» չեմ եղած սփիւռքեան եւ հայաստանեան որոշ անուններու իր անդրադարձներէն...

-Յայտնի են քու ըմբռնումներդ, եւ, ինչպէս կ'ըսէն ճաշակներդ, ի՞նչ կը խորհիս, արդեօք ենթակայական չե՞ն մտածումներդ...

Կարծես թէ պահ մը ընկրկեցայ, թերեւ տեղին չէր յոյժ ուղղամիտ ըլլալս:

-Հոգ չէ, մի՛ նեղուիր,- յարեց պարոն Սիմոնեան,- առաջին իսկ օրէն քեզ այդպէս ալ ճանչցած եմ, սնափառութիւններ չես սիրեր, իրար հասկնալը մեծ արժանիք մըն է: Մենք իրար կը հասկնանք...

Եւ ես ատ «հասկնալու» ընդմէջէն... կը հասկնամ, կը գնահատեմ նշեալ հատորին յատկապէս այն էջերը, զորս կը վերաբերին, ըսել կ'ուզեմ «կ'ենթարկուին» ՊԷպօ Սիմոնեանի գրադատական մտայղացքին, ու վերլուծական խոկումներուն. «Արեւմտահայ գրականութեան գեղապաշտ ձգտումներու

(Ծար.ը տեսնել էջ 12)

ՊԷպօ Սիմոնեանի մտաւորական կերպարը ամբողջական կը դառնար իր ապրած ժամանակին հանդէպ ունեցած խոր պատասխանատուութեան գիտակցութեամբ: Ան երբեք չընտրեց դիւրին ճամբան, չհետեւեցաւ հոսանքին եւ իր համոզումները չզոռեց պահու պատեհապաշտ պահանջներուն: Գրականութեան մէջ ան փնտռեց ոչ թէ անձեռու պաշտպանութիւնը, այլ՝ ճշմարտութիւնը, արժանիքը եւ նորի հանդէպ արդար ու անաչառ հայեացքը: Նոյն սկզբունքայնութիւնն էր, որ առաջնորդեց զինք իր հրապարակագրական, կրթական եւ ազգային գործունէութեան ամբողջ ընթացքին:

Բայց ՊԷպօ Սիմոնեանի մասին իմ յիշողութեանս մէջ ան նախ եւ առաջ դասախօսն է: Ան նաեւ լուռ ու հետեւողական ուղեկիցն էր մեր առաջին քայլերուն դէպի գրականութեան եւ մամուլի աշխարհը: Կը հետեւէր մեր հետաքրքրութիւններուն, կը նկատէր մեր մէջ տակաւին չբացուած կարողութիւնները եւ, երբեմն մէկ բառով, երբեմն մէկ ուղղութեամբ, մեզ կը մղէր առաջ: Այդ փոքրիկ մղումները տարիներու ընթացքին պիտի դառնային ճանապարհի մը նշաններ:

Չինք առաջին անգամ ճանչցայ ուսանողական տարիներուս՝ Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկի մէջ: Այդ օրերը ժամանակի հեռաւորութենէն կարծես շատ հեռու են, բայց կան դէմքեր, որոնց ներկայութիւնը տարիները չեն մաշեցներ: ՊԷպօ Սիմոնեան այդ դէմքերէն էր:

Հիմնարկի դասախօսական կազմին մէջ ան սովորական ներկայութիւն մը չէր: Երբ լսարան կը մտնէր, մենք կը զգայիք, որ իր դասապահը սահմանափակուած պիտի չըլլար զիրքի մը կամ ծրագրի մը էջերով: Ան գրականութիւնը կը դարձնէր կենդանի հանդիպում՝ հեղինակներու, ժամանակներու, գաղափարներու եւ լեզուի հետ:

Իրմով է, որ մեր մտահորիզոնը բացուեցաւ սփիւռքահայ գրականութեան մեծ աշխարհին: Ան մեզ կը տանէր դէպի Պոլիս, դէպի արեւմտահայ գրականութեան հարուստ ու բարդ միջավայրը, դէպի այն գրողներն ու մտաւորականները, որոնք իրենց ժամանակին հետ պայքարած, ստեղծագործած եւ ազգային հոգեւոր ժառանգութիւն մը պահպանած էին:

Պոլսահայ գրականութեան յորձանուտին մէջ մենք կը բացայայտէինք ոչ միայն հեղինակներ ու երկեր, այլեւ՝ լեզուի նրբութիւնը, ոճի հարստութիւնը եւ մտքի խորութիւնը: Ամէն նոր անուն մեր առջեւ կը բանար գրական փորձառութեան նոր տարածք մը:

Եւ գուցէ ուսուցիչի մը ամենամեծ ժառանգութիւնը նոյնինքն ա՛յս է. երբ տարիներ անց, կեանքի ուրիշ հանգրուանի մը մէջ, յանկարծ կը զգաս, որ քու ներսդ տակաւին կը շարունակուի դաս մը, զոր ժամանակին աւարտած կը կարծէիր: Ու կը հասկնաս, որ իսկական ուսուցիչը երբեք չի հեռանար իր ուսանողէն. ան կը մնայ անոր յիշողութեան մէջ, բայց աւելի խոր՝ անոր մտածումներուն, ըմտրութիւններուն եւ գրական կեանքի հայեացքին մէջ:

Պայծիկ Գալայճեան

Սփիւռքն հայ պահելն ու ամրացնելը ազգային

քաղաքականութեան հիմքն է:

Այդ հիմքը գորատը է Հայրենիքով՝

ազգային պետականութեամբ:

Առանց հայրենիքի ոգեշնչող իրականութեան

ազգային-մշակութային վերընձիւղումն ու վերապրումն

նոյն ուժգնութիւնը չէին ունենար:

Սփիւռքը աստիճանաբար կը գունաթափուէր ու կ'ուժաթափուէր:

ՊԷպօ Սիմոնեան

Առաջին հանդիպումս ՊԷպօ Սիմոնեանի հետ 2000 թուականին էր եւ առաջին իսկ պահուն չկրցայ... չարտայայտուիլ, կարելի չէր նաեւ անտեսել 80-ական թուականներէն զիս համակած զգացողութիւնը: Այդ տարիներուն հայաստանեան նոր սերունդի բանաստեղծներու նկատմամբ «տեղական» արշաւանք մը սանձարգելքածուած էր: ՊԷպօ Սիմոնեան սերունդի բանաստեղծներէն Արմէն Մարտիրոսեանի «Թռչուններ» առաջին ժողովածուի մասին համակրալից յօդուած մը հրատարակած էր «Բազին»ին մէջ ու ես գոհացումով մը վերյիշելով, զարմացուած էի զինք.

-Ինչպէ՞ս կը յիշես,- արձագանգեց գոհունակ ժպիտով մը:

-Զօրավիզ եղած էք, ինչպէս չիշեն:

Պատասխանս ջերմ մթնոլորտի «անանձնական» սկիզբ մը հանդիսացաւ, զոր շարունակուեցաւ ՊԷյրոյ, Երեւան մեր հանդիպումներու ընթացքին եւ ինք միշտ կը յիշէր: Իրապէս ժամանակաշրջանը «նոր» բանաստեղծներու համար այնքան ալ բարեպատեհ չէր. աջէն, ձախէն յարձակումներ, նորարարութեան ըմբռնումին հանդէպ ոչ պատշաճ վերաբերմունք: Յաճախաբար, ինչպէս կ'ըսեն՝ ցեխայարձակումներ, եւ ՊԷպօ Սիմոնեանի արդարադատ գրադատական պահուածքը ոչ թէ ի պաշտպանութիւն էր «գրչընկերային», այլ համերաշխութիւն առ գրական նորածագ իրողութիւնները, նաեւ այլ մթնոլորտի մը մէջ դիտարկելու, քննաբանելու նորերու արուեստը, եւ ինք այն սակաւաթիւ գրողներէն էր որ չէր սխալած:

Իսպառ զերծ ըլլալով անջատողական մղումներէ ու միշտ այդպիսին մնալով, ինչպէս ճանչցած էի հետագայ տարիներուն՝ բանաստեղծի, հրապարակագրի, գրադատի, ի վերջոյ, ուսուցիչի իր կերպարին ու դասանած գաղափարներուն աներդմնազանց էր. «1980-ական թուականներուն Լիբանանի ժողովուրդը կ'ապրէր քաղաքացիական պատերազմի դժոխային մթնոլորտին մէջ, այս իրողութեամբ, հակառակ մայրաքաղաքը երկփեղկող վտանգաւոր սահմաններու եւ անցարգելներու գոյութեամբ ՊԷպօ Սիմոնեան կը յանդգնէր անցնիլ քաղաքին մէկ շրջանէն միւսը՝ գրական եւ մշակութային հանդիսութիւններու ներկայ ըլլալու կամ հրապարակային դասախօսութիւններ տալու առաքելութեամբ՝ արհամարհելով ամէնուրեք տիրապետող մահուան սարսափն ու անդոհանքը...»: Պարոյր Աղպաշեան:

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ ԴԱՐՁՆԵՆՔ ԴՊՐՈՑ ՈՒ ԵԿԵՂԵՑԻ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ԸՆԶԱԿ Ա. ԲՀՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Դպրոցական նոր տարեշրջանը դարձեալ սկսաւ։ Դպրոցի դերին ու կարեւորութեանը բոլորս ալ քաջատեղեակ ենք։ Իւրաքանչիւր ծնողը իր սիրասուն զաւակները դպրոց կը դրկէ, ոմանք նոյնիսկ կրթաքոշակ վճառելով մասնաւոր կրթական հաստատութիւններ կը դրկեն, Հակառակ անոր որ, գէթ Ամերիկայի մէջ համալսարանական հանրային դպրոցները ձրի են։ Բոլորս ալ կը հաւատանք, որ մեր զաւակները պէտք է ուսում ստանան եւ վկային երկրորդական վարժարանէ մը ու նոյնիսկ համալսարան երթան բարձրագոյն ուսում ստանալու։

Հակառակ անոր, որ Միացեալ Նահանգները ամէնէն հարուստ երկիրն է այս մոլորակին վրայ, կ'ըստի թէ բնակչութեան չորսէն մէկը կարդալ-գրել չի գիտեր։ Օրինակի համար, ճանապարհային ցուցմունքներու ցուցատախտակներն անգամ կարդալու եւ կամ հասկնալու դժուարութիւն ունին։ Անոնք պարզապէս անգրագիտութենէ կը տառապին։

Հայութեան պարագային եւ Յեղասպանութենէն մազապուրծ մեր ժողովորդը իր առաջին ու սրբազան պարտականութիւնը նկատեց իւրաքանչիւր եկեղեցւոյ կողքին նաեւ կառուցել կամ ստեղծել ամէնօրեայ եւ կամ գոնէ շաբաթական Հայ լեզուի եւ մշակոյթի ուսուցման դպրոց մը։

Այս ամէնը նշելէ ետք, կը փափաքիմ մեր բոլոր ծնողներուն ուշադրութիւնը հրաւիրել Հայ ընտանիքի սրբութեանն ու ունեցած պարտաւորութեանը։ Մեր զաւակները դպրոց արձանագրելը մէկ բան է եւ ուրիշ բան է մեր տունները դպրոց ու եկեղեցի դարձնելը։ Ամէնէն կարեւոր դպրոցը ընտանիքն ու տունն է մեր զաւակներուն համար։ Անոնք դպրոցէն աւելի իրենց տանը մէջն է որ ժամանակնին կ'անցընեն։ Այս մասին երջանկայիշատակ Մկրտիչ Խրիմեան Հայրիկ Կաթողիկոսը աւելի քան դար մը առաջ գրած է։ Յատկապէս եւ նախ ընտանիքէն է, որ մեր զաւակները կը սորվին նիստ ու կացի օրէնքները, ճիշդն ու սխալը, լաւն ու վատը, չափի զգացումն ու ընդհանրապէս կը դառնան իրենց ծնողաց բարի սովորութիւններուն հայելին։ Նոյնքան ճիշդ է որ հանրային դպրոցն ալ կու գայ լրացնելու պակասն ու բազմատեսակ գիտութիւն ջամբելու աւանդոյթը։

Մեզ համար ընտանիքը կոչուած է իր զաւակներուն Հայ եկեղեցւոյ եւ մշակոյթին կապելու թէ՛ Հայաստանի եւ յատկապէս սփիւռքի մէջ։ Այս նպատակին համար Հայ եկեղեցին Ամերիկայի մէջ, առաջնորդարանին գլխաւորութեամբ եւ հովանաւորութեամբ ո՛չ մէկ բան խնայած է դասագիրքերու հրատարակութենէն մինչեւ կրթական ձեռնարկներու կազմակերպումները ու ուսուցիչներու պատրաստութիւնը։ Հայոց լեզուի ուսուցման կարեւորութիւնը միշտ ալ շեշտուած է Հայ եկեղեցւոյ սպասաւորներու կողմէ, հակառակ արտերկրի մէջ գոյութիւն ունեցող բազմապիսի դժուարութեանց։ Որպէս հոգեւոր հովիւ քանի-քանի անգամներ ականատես եղած են չափահաս երիտասարդներու, որոնք իրենց ծնողաց, մեծ վրդովմունքով յանդիմանած են թէ ինչո՞ւ իրենց հայերէն չեն սորվեցուցած եւ կամ ընձեռնուած առիթէն չեն օգտուած իրենց հայերէն լեզուին ծանօթացնելու։ Այստեղ միտքս կու գայ ամենայն Հայոց բանաստեղծ՝ Յովհաննէս Թումանեանի միտքը. «Լեզուն է ամէն մի ժողովրդի ազգային գոյութեան ու էութեան ամենախոշոր փաստը, ինքնուրոյնութեան ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմութեան ու հեռաւոր անցեալի կախարդական բանալին, հոգեկան կարողութիւնների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանութիւնը։»

Մեր զաւակներուն մինչեւ համալսարան երթալը անոնք մեր տանը շուրջին ու հոգատարութեանը ներքոյ են։ Ուրախալի է տեսնել, որ շատ մը հայ ծնողներ մեծ կարեւորութիւն կու տան իրենց զաւակները հայեցի դաստիարակութեամբ մեծցնելու եւ անոնց կապելու Հայ եկեղեցւոյ ուսուցումներուն եւ աւանդութեանց։ Բայց աւելի առողջ եւ հայ արժէքներով զինուած ազգ մը պիտի ունենանք երբ իւրաքանչիւր Հայ ծնողը այդ նոյն նախանձախնդրութեամբ դաստիարակէ իր զաւակը։

Ով Հայ ծնողը, ճիշդ է որ դպրոցական գիտելիքներն ու վկայականները յոյժ կարեւոր են, բայց յիշէ որ ամէնէն կարեւոր եւ ազդու դպրոցը բնակարանդ է երբ կը վերաբերի Հայ մշակոյթի ու մեր կրօնի ուսուցման, որտեղ եւ զաւակդ պիտի սորվի քու ամէնօրեայ կեանքէդ։ Կը յիշեմ կիրակի մը պատարագի աւարտին մայր մը մօտեցաւ իր պատանի մանչին հետ աւետարանը համբուրելու։ Այդ վայրկեանին ուրախութիւնս յայտնեցի պատանիին տեսնելու եւ ըսի. «Կարօտցած ենք քեզ», որուն մայրը, իր մանչին դառնալով անմիջապէս յանդիմանական ոճով թելադրեց. «Ըսէ՛ Տէր Հայրին, ինչո՞ւ չես գար եկեղեցի»։ Մանչը շփոթած բայց ինքնավստահ ու աներկիւղ դիմադարձեց մօրը ըսելով. «Դուն ինչու շա՞տ կու գաս»։

Այո, մեր զաւակները մեզմէ օրինակ կ'առնեն ու կը սորվին։ Մենք մեր տանն ու կեանքին մէջ ինչ որ կ'ընենք, այդ է որ մեր զաւակները նաեւ կը սորվին։

Յովհաննէս Թումանեան, այս մեծանուն բանաստեղծը նաեւ ըսած է. «Երեք բան երբեք չեն վերադառնում՝ արձակուած նետը, ասուած խօսքը եւ անցած օրերը»։

Այո՛, անցած օրերը կրկին չեն վերադառնար։ Դաստիարակէ զաւակներդ երբ տանը մէջն են, տունդ Հայ դպրոցի ու եկեղեցիի վերածէ՛ գէթ օրական 15-20 վայրկեան։ Վաղը այս առիթը կրնաս չունենալ։ Բազմիցս ըսուած է շատերու կողմէ, թէ առողջ ու ամուր հասարակութեան կամ ազգի մը հիմքը՝ ընտանիքն է։ Քաջ գիտակցիր, որ քու ընտանիքդ ալ թանկագին է մեր եւ քու ազգիդ համար։

Սեպտեմբեր 8, 2026
Թրամպըլ, Քրննէքիքէթ

ԵՐԲ ԲԱՊԱՔԸ ԱԿԱՌԻԱ Է ԿԱՌՈՒՂ.

ԵՐԵՒԱՆԸ ԵՐԵՔ ՕՐ ԴԱՐՁԱԻ ԳՐԲԻ ՔԱՂԱՔ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ԳԵՈՐԳ ԳԻՒԼՈՒՄԵԱՆ

Սեպտեմբերի 4-ից 6-ը Հանրապետութեան հրապարակը եւ յարակից մշակութային հաստատութիւնները վերածուեցին գրական մեծ հաքթակի։ Հայաստանի ազգային պատկերասրահը, Հայաստանի պատմութեան թանգարանը եւ Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանը երեք օր շարունակ հիւրընկալեցին գրքերի գրողների, գրականագէտների եւ առհասարակ մշակութասէր մարդկանց՝ ամենատարբեր ոլորտներից։ Տեղի ունեցան գրքերի շնորհանդէսներ, հանդիպումներ հեղինակների հետ, քննարկումներ, վարպետութեան դասեր, ընթերցումներ, թատերական ու երաժշտական միջոցառումներ։ Բայց այս տարուայ փառատօնի ամենակարեւոր առանձնայատկութիւնը, թերեւս, նրա թեման էր՝ լեզուն։ Այն ներկայացոււմ էր ոչ միայն որպէս հաղորդակցութեան միջոց, այլեւ որպէս յիշողութեան կրող եւ մշակութային շարունակականութիւն ապահովող ուժ։ Մարդկային քաղաքակրթութիւնը գոյութիւն ունի նաեւ այն պատճառով, որ սերունդները կարողացել են իրենց սպրաճը, մտածածը, ստեղծածն ու երագածը փոխանցել յաջորդներին։ Եւ այդ փոխանցման ամենահզօր ձեւերից մէկը եղել ու մնում է լեզուն։ Այս իմաստով գրքի փառատօնը միայն գրական միջոցառում չէր։ Այն նաեւ խօսքի, յիշողութեան եւ մշակութային ինքնութեան մասին խօսելու հնարաւորութիւն էր։

Փառատօնի երեք օրերի ընթացքում անցկացուեց աւելի քան յիսուն միջոցառում, որոնց մասնակցեցին գրողներ, հրատարակիչներ եւ գրական ոլորտի մասնագէտներ Հայաստանից եւ արտերկրից։ Միջազգային ծրագիրն այս տարի ընդգրկել է 13 երկիր՝ հնարաւորութիւն ստեղծելով հայկական գրական միջավայրի համար շփուելու տարբեր գրական մշակոյթների ներկայացուցիչների հետ։

Այդ շփումը փառատօնի կարեւոր բաղադրիչներից մէկն է։ Գրականութիւնը սահմաններ չունի, եւ Երեւանում անցկացուող միջազգային փառատօնը հէնց այդ գաղափարն է փորձում գործնականօրէն իրականացնել։ Յատկապէս ուշադրութիւն է հրատարակիչների միջազգային համագործակցութեան ծրագիրը՝ fellowship-ը, որի շրջանակում տեղի են ունենում հանդիպումներ հայ եւ օտարերկրեայ հրատարակիչների միջեւ։ Սա արդէն ոչ միայն մշակութային, այլեւ մասնագիտական երկխօսութեան տարածք է՝ նոր թարգմանութիւնների, համատեղ նախագծերի եւ հայկական գրականութիւնը միջազգային ընթերցողին հասցնելու համար։

Միեւնոյն ժամանակ փառատօնի կենտրոնում շարունակում է մնալ հէնց ընթերցողը։ Գրքի ցուցահանդէս-տօնավաճառը հնարաւորութիւն է տալիս մի վայրում հանդիպել բազմաթիւ հրատարակչութիւնների եւ գտնել թէ՛ նոր, թէ՛ վաղուց փնտռուող գրքեր։ Փառատօնի պաշտօնական տունէլներով՝ նախորդ տարիներին այն ունեցել է շուրջ 40 հազար այցելու, վաճառուել է աւելի քան 18 հազար գիրք, իսկ մասնակցել է աւելի քան 50 հրատարակչութիւն։ Այս տարուայ տունէլները դեռեւս ամփոփուած չեն։

Գրականութեան հանդէպ հետաքրքրութիւնը յատկապէս տեսանելի է դառնում այն պահին, երբ ընթերցողը հանդիպում է հեղինակին։ Գիրքը, որը մինչեւ այդ գոյութիւն ունէր միայն էջերի մէջ, յանկարծ ստանում է ձայն, դէմք եւ պատմութիւն։ Ընդհանդէսները, քննարկումները եւ կենդանի զրոյցները այդ պատճառով դառնում են փառատօնի ոչ պակաս կարեւոր մասը, քան գրքերի վաճառքը։ Այս տարուայ ծրագրում այդ բազմազանութիւնը յատկապէս ընդգծուած էր։ Կային ինչպէս հայ եւ օտարագի հեղինակների գրքերի շնորհանդէսներ, այնպէս էլ թարգմանական գրականութեանը, դրպրոցներում ընթերցանութեան խթանմանը, գրականութեան հասանելիութեանը եւ ժամանակակից գրական գործընթացներին նուիրուած քննարկումներ։ Ծրագրում տեղ էին գտել նաեւ Նաբոկովի ստեղծագործութեան հիմքով ներկայացում, պօեզիայի երեկոներ, ինտելեկտուալ խաղեր եւ վարպետութեան դասեր։

Առանձին ուշադրութեան արժանի է նաեւ գրական մրցոյթը։ Այն փառատօնի կարեւոր այն հատուածներից է, որտեղ ընթերցողը դառնում է նաեւ նոր գրականութեան ձեւաւորման ականատես։ Այս տարի մրցոյթը յայտեր է ընդունել արձակ, պոեզիա, դրամատուրգիա եւ մանկապատանեկան գրականութիւն անուանակարգերում։ Մտացուել է 455 յայտ, որոնցից 205-ը հաստատուել են։ Իւրաքանչիւր անուանակարգում յաղթողին նախատեսուած էր 400 հազար դրամ մրցանակ։

Այս ամէնի մէջ կարեւոր է նաեւ այն, որ փառատօնը աստիճանաբար դուրս է գալիս Երեւանի սահմաններից։ 2025 թուականից այն սկսեց այցելել Հայաստանի մարզեր՝ արդէն հիւրընկալուելով Գիւմրիում եւ Կապանում, իսկ այս տարուայ ծրագրում առանձին օր էր նախատեսուած նաեւ Մեղրիի համար։ Այնտեղ գրքի տօնավաճառին զուգահեռ կազմակերպուել էին ստեղծագործութեան աշխատարաններ, հեքիաթի ժամ, խաղեր, բանախօսութիւններ եւ պօեզիայի երեկոյ։ Սա կարեւոր փոփոխութիւն է, որովհետեւ գրքի մշակոյթը միայն մայրաքաղաքային մշակոյթ չէ։ Գրականութիւնը կարող է եւ պէտք է հասնի այնտեղ, որտեղ ընթերցողը սպասում է դրան։ Գիրքը կարող է ճանապարհորդել քաղաքից քաղաք, համալսեցից համայնք եւ իւրաքանչիւր վայրում նոր ընթերցողի համար դառնալ սեփական պատմութիւնը գտնելու միջոց։ Այսօր, երբ տեղեկատուութեան հոսքն աւելի արագ է, քան երբեւէ, իսկ ընթերցանութիւնը յաճախ մրցում է էկրանի հետ, գրքի փառատօնի գոյութիւնն ինքնին մշակութային յայտարարութիւն է։

Երեւան
06.09.2026

ՊԱՐԱՆԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՎՈՅԻ

Ուրախալի երեւոյթ պէտք է համարել գրականութեան դասախօսութեան համար մեծաթիւ լսարանի ներկայութիւնը Իրանահայ միութեան գրադարանի սրահում, հինգշաբթի, 2026 թ. 27 օգոստոս, ժամի 6.30-ին պարսից Օմար Խայեամի մասին: Նա ճանաչուած համաշխարհային դէմք է իր փիլիսոփայութեան, աստղագիտութեան, տոմարագիտութեան, բժշկութեան եւ բանաստեղծութեան առումով: Նա պարսից գրականութեան եւ գիտութեան գագաթներից է: Օմար Խայեամը իր ժամանակի պատմութեան մէջ չի յիշատակուում որպէս բանաստեղծ, այլ լոկ՝ գիտնական, բայց ապագան ցոյց տուեց, որ նա առաջին հերթին հանդիսանում է որպէս գրականութեան ամենափայլուն աստղերից մէկը:

Օ. Խայեամը ճանաչուած է նաեւ հայերիս մէջ, նրա կեանքն ու բանաստեղծութեան քառերկերը հայերէնի են թարգմանուած եւ պատկերազարդարուած մեր որոշ գրողների կողմից:

Օմար Խայեամի անձնական կեանքի եւ ծննդեան բուականի մասին ստոյգ տեղեկութիւններ չկան, ըստ որոշ տուեալների ծնունդը նկատի է առնուել (Քր.1040) թ., իսկ մահը (Քր. 1122-23) թ. 83 տարեկան հասակում: Նրա գիտական գործունեութեան մասին բաւական նիւթեր եւ տեղեկութիւններ են հասել: Այս հեղինակին ներկայացնելու համար իրանահայ գրական բաժանմունքի անդամ Սարգիս Միրզայեանը ողջոյնի խօսքով լսարանին ամպլիոն հրաւիրեց պարսից գրականութեան լաւատեղեակ գրականագէտ Ալֆրէտ Մանանեանին, ապա հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց նրա կենսագրութեան մասին ասելով՝

Նա ծնունդով Իրանահայ է, Թեհրանի պետական համալսարանի պարսից գրականութեան ճիւղն աւարտել է յաջողութեամբ, Ամերիկա գաղթելով զբաղվել է իր սիրած մասնագիտութեամբ, դասաւանդել է պարսից գրականութիւն եւ հասարակագիտութիւն OHAO STATE եւ LA-ICT համալսարաններում: Նա պարսից հռչակաւոր գրականութեան դէմքերի դասախօսութիւններ է ներկայացրել, ինչպէս՝ Հաֆէզի, Սաատիի, Սատեղէ Հետալաթու եւ Օմար Խայեամի, այսօր Ալֆրէտ Մանանեանը ներկայացնելու է Օմար Խայեամի երկրորդ մասը: Ա.

Մանանեանը շնորհակալութիւն յայտնելով հոծ ներկայութեան նաեւ պարսիկ հայրենակիցների, սկսեց իր ելոյթը պարսկերէն սահուն լեզուով: Նա իր պատրաստած նոթագրութիւններով ներկայացրեց Օ. Խայեամի գիտական



Ալֆրէտ Մանանեան, Սարգիս Միրզայեան



Ալֆրէտ Մանանեան, Գուրգէն Քեշիշ Յարութիւնեան



աշխատանքների եւ նրա ապրած դարաշրջանի քաղաքական, հասարակական կացութեան մասին, նաեւ նրա աշխարհահռչակ քառերկերի եւ առանձնապէս նրանց վաւերականութիւնը ճշդելու հարցում պարսիկ եւ Եւրոպացի հետազոտողների գործադրած ջանքերի վերաբերմամբ յիշելով Քրիստէնսէնը, Սադեղէ Հեղայեաթը եւ ուրիշներ: Օ. Խայեամի քառերկերի քանակը մինչեւ 80-1200-ի ուռնացած համարուեց նրա ընկերների եւ գրչագիրների իրաքանչիւրը նոյն ոգով քառերկեր գրելով ընդգրկուել են ընդհանուրի մէջ, ըստ Սատեղ Հետալաթու, Ֆրուրուն եւ այլոց տատանման մէջ են եղել (129 +14= 143) 14 քառերկերը վաւերական-բանալի են, իսկ 129-ը նման 14-ին

Ռ. ԿՈՐԻԷՆ

քառերկեր են: Ա. Մանանեանը անդրադարձաւ Օ. Խայեամի նիւթապաշտ փիլիսոփայական հաւատալիքներին նկատել տալով նրա քառերկերում որոշակի ազդեցութիւնը յոյն հռչակաւոր փիլիսոփայ Էպիկուրի (Մթ. 341-270), որը հերքում է ամէն կարգի գերբնական ուժերի ներգործութիւնը: Ա. Մանանեանը յիշեց նաեւ Օ. Խայեամը գիտական հմուտ հաշուարկումով հիմք է դրել մի արեգակնային տարուայ տոմարին: Համաձայն այդ տոմարի տարին սկսում է զարման գիշերահաւասարից (մարտ 21-ից) եւ տեւում է ճիշտ մի արեգակնային տարի, որը գործադրում է Իրանում, Նով Ռուգ պարսկական նոր տարին այդ հիմունքով է կատարում: Ա. Մանանեանը բաւական ճոխ վաւերագրերի հիման վրայ ներկայացրեց պարսից հռչակաւոր գրողին, որի քառերկերից հայերէն թէ պարսկերէն հայեր անգիր արտասանում են: Դասախօսութեան աւարտին կարդացուեց Օ. Խայեամի քառերկերից 14-ը, պարսկերէնով կարդաց Ա. Մանանեանը, իսկ հայերէն թարգմանութիւնը՝ բանաստեղծ Գուրգէն Քեշիշ Յարութիւնեանը յիշելով հայ թարգմանիչների անունները: Նրանցից յիշեցք երեքը՝

Խայեամ, եթէ դու գիտով ես՝ ուրախ կաց,
Թէ սիրունիկ եարի քով ես՝ ուրախ կաց,
Ամէն ինչի վերջը ի՞նչ է. – ոչինչ է,
Մեայիւր չկաս, սակայն որ կաս՝ ուրախ կաց:

Է՛յ իմաստուն ծերուկ, կանուխ արթնացիր,
Այս հողը մաղող տոյին նայիր ուշացիր,
Ասա իրեն՝ զգոյշ մաղիր, որ այդ հողը
Արքաների ուղն ու ծուծն է ցան ու ցիր:

Գինուս կուլան քարին տուի՝ ջարդեցի-
Հարբած էի՝ այդպէս խելառ վարուեցի,
Կուլան ասաց՝ «Ես էլ քեզ պէս մարդ էի. –
Դու էլ մի օր կուժ կը դառնաս, իմացիր»:

Մի շարք հարց ու պատասխաններով մէկ ժամից աւելի տեւողութեամբ դասախօսութիւնը աւարտին հասաւ:

Ներկաները հրաւիրուեցին համեստ հիւրասիրութեան: Մթնոլորտը ոգեւորիչ էր, ջերմ եւ ուրախ տրամադրութեամբ:

Մենք հայերս պարսից գրականութեան տիտաններին ինչպէս որ հարկն է եղել հայերէնի ենք թարգմանել եւ տարածել մեր ժողովրդի տարբեր խաւերում, այսպիսով մշակութային եւ բարի դրացիական սերտ կապեր ստեղծելու ազնիւ նպատակներով, սա լոկ խօսքեր չեն, այլ փաստում ու հաստատում, յոյսով այս կապերը երկուստեք առաւել եւս կը խորանան:

Օգոստոսի 30, 2026 թ.

Սանդանդ, Լոս Անճելլոս

*Թարգմանութիւնը՝ Աշոտ Գ. Մինասեանի գրքից



ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՄԵԾԱԳՈՅՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՇՄԻ ՄԱՍՆԱՃԻՐ
Tekeyan Cultural Association Metro Los Angeles Chapter

Գինեձօն


Յովերժական Հայաստան: Նորատուսի Խաչքարերը
Սուրբ Նշաններ, Մոռացված Ձայներ եւ Հավատքի Արձագանգներ
Eternal Armenia Khatchkars - The CrossStones of Noratus
Sacred Symbols, Forgotten Voices, and the Echoes of Faith

Գլխաւոր բանախօս, հեղինակ եւ լուսանկարիչ

Դավիդ Քարամյան

DAVID KARAMIAN

Keynote speaker, author and photographer



David Karamian will present his newest book, *Eternal Armenia: Khatchkars – The CrossStones of Noratus*, a three-year project exploring the ancient cemetery of Noratus, home to the world's largest surviving collection of Armenian khatchkars (cross-stones). Through photography, history, and cultural reflection, the presentation offers a journey into one of Armenia's most extraordinary sacred landscapes and the enduring legacy of its Christian heritage.

Կիրակի, 4 Հոկտեմբեր 2026-ին,

կ.է. ժամը 5:00-ին

Sunday, October 4, 2026, 5:00 PM

ԹՄՄ Պէշկէթիւրեան կեդրոնին մէջ:

Tekeyan Cultural Association Beshgeturian Center

1901 N. Allen Avenue, Altadena, CA 91001

info@tekeyanla.org

Հայ Փայլուն Աստղեր Օտար Երկնակամարներու Ներքոյ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

Վստահ եմ բոլորս ալ քաջածանօթ ենք Ֆրանսահայ աստղերէն Շարլ Ազնաուրին՝ այժմ մահացած, եւ 87 տարեկան Ռօզի Արմէնին:

Այսօր ես ձեզի պիտի ներկայացնեմ նոր յայտնաբերումներ՝ Եւրոպական զանազան երկիրներէն: Շատերուն համար հաւանաբար այս աստղերը նոր յայտնաբերումներ չեն, թող անոնք ներող ըլլան ինծի:

Ֆրանսա
Jo Corbeau, բուն անունով՝
ճորճ Օհաննէսեան

Ան ծնած է 1946-ին՝ Ֆրանսայի Մարսէլ քաղաքը: Արեւմըտահայ նշանաւոր գրող Ջարէհ Ռըրունին եղած է իր զարմիկը՝ հօրաքրոջ տղան: Անոր համար կ'սեն թէ ան եղած է The Armenian voice of French Reggae.

Jo Corbeau՝ որ կը նշանակէ ագռաւ, 1971-էն ի վեր մասնակցած է Ֆրանսական օփերային: Ան 1989-ին գրած է իր առաջին հայերէն երգը՝ “Արեւին Չայնը”: Ան այժմ կ'ապրի Երեւան:



Անգլիա
Էլէնօր Էքսթըրճեան, ծանօթ որպէս Էլի

29 տարեկան Էլի նշանուած է 29 տարեկան Սամուէլ՝ ծանօթ որպէս Սէմ, Չաթոյի հետ: Անոնք կը ծրագրեն ամուսնանալ յաջորդ Գարնան: Հետաքրքրական է գիտնալ որ նշանտուքի ճեմապակիէ մատանին՝ Սամուէլի ձեռքի գործն է:



Բայց ո՞վ է Էլէնօր Էքսթըրճեանը: Ան դուստրն է Արուեստից Փրօֆէսօր Դաւիթ Էքսթըրճեանի եւ Սուզան Մորի:

Գալով Սամուէլ Չաթոյի, ան զուակն է Լէյտի Սարահ Չաթոյի եւ Դանիէլ Չաթոյի: Իսկ Լէյտի Սարահ Չաթօն դուստրն է Էլիզապէթ Թագուհիի քրոջ՝ Մարկարէթ Իշխանուհիին: Մէկ խօսքով՝ Սամուէլ Չաթօն Մարկարէթ Իշխանուհիին բոռն է եւ այդ առումով՝ Բրիտանիոյ գահին 30-րդ ժառանգորդը:

Էլի ասպարէզով նկարիչ է եւ ֆիլմի արուեստագէտ: Իսկ Սէմ Չաթօ ասպարէզով բրուտագործ է: Անոնք իրարու ծանօթացած են Էտինպուրկի համալսարանին մէջ, զորս աւարտած են եւ հիմա միասին կ'ապրին, Լոնտոնի մէջ:

Հետաքրքրական է գիտնալ որ Բրիտանիոյ Չարլզ Գ. Թագաւորը տեղեակ պահուած է այս միութեան կապակցութեամբ եւ շատ ուրախ է յիշեալ զոյգին համար:

Միացեալ Նահանգներ
Տոմինկօ Հինտոյեան

1 Յուլիս, 2026-ին, հայազգի Տոմինկօ Հինտոյեան ստանձնեց Լոս Անճելըսի Օբերայի երաժշտական դէկադարի պատասխանատու պաշտօնը՝ հինգ տարուան շրջանի մը համար:

Իսկ ո՞վ է Տոմինկօ Հինտոյեանը: Ան ծնած է Վենեզուէլայի մայրաքաղաք Գարագասի մէջ, 1980 թուականին: Անոր հայրն է յայտնի ջութակահար Տոմինկօ Կարսիան, իսկ մայրը՝ Յայտնի իրաւաբան Վիքի Հինտոյեանը՝ որ ժամանակին Սուրիայէն գաղթած է Վենեզուէլա:

Տոմինկօ Հինտոյեանը ասպարէզով եղած է ջութակահար, հօրը նման: Ան սակայն իր ուսումը շարունակած է Huarte Ecole de Musique de Geneva եւ ստացած Մագիստրոս Արուեստից տիտղոս:



Քիչ մը Ամէնուրեք
Լիպարիտ Աւետիսեան

Աշխարհահռչակ Թեմօր Լիպարիտ Աւետիսեան ծնած է Երեւան՝ 1990 թուականին: Ան իր մասնագիտական ուսումը ստացած է նախ Մոսկուայի Չայքովսքիի անուան պետական երաժշտանոցին մէջ եւ ապա Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցին մէջ:

Լիպարիտ՝ 2013-ին թուականին մեներգիչն էր Երեւանի Սպենդիարեանի անուան օփերայի եւ պալէի ազգային ակադեմիական թատրոնին: Իսկ 2016-17 տարեշրջանին՝ օտարերկրեայ իր անդրանիկ ելոյթը ունեցած է Լոնտոնի արքայական օփերայի պալատին մէջ: Ան 2020-ին, ստացած է Հայաստանի Հանրապետութեան Վաստակաւոր Արդիստի Կոչում:

Բայց իր բնակավայրին համար՝ ինչո՞ւ ըսի “Քիչ մը Ամէնուրեք”, հիմա թոյլ տուէք որ բացատրեմ: Պահ մը կարդացէք 2026-27 տարեշրջանի ելոյթներուն իր ժամանակացոյցը, եւ վստահ եմ որ դուք ալ պիտի արդարացնէք այդ յորջորջումը:



Մեպտեմբեր, 2026 ----- Լոնտոն
Հոկտեմբեր, 2026 ----- Վիեննա
Նոյեմբեր, 2026 ----- Մոսկուա
Յունուար, 2027 ----- Պերլին

Վստահ եմ տակաւին շատ մը ուրիշ աստղեր ալ կան օտար երկնակամարներուն վրայ եւ մենք պէտք է միշտ հալարտ ըլլանք անոնցմով ու յաջողութիւն մաղթենք իրենց ծրագիրներու իրականացման համար:

Պատիւ՝ արժանաւորաց...

ՎԱՀԱՆ ԹԵԺԷՆԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆ
ՊԱՆՏԱԼԻ ԱՆՅԵԱԼ, ՊԱՅԾԱՌ ԱՊԱԳԱՅ
2026-2027 ՏԱՐԵՇՐՋԱՆ
ՍՈՐԿԻՐ, ԱԾԻՐ, ՅԱՋՈՂԻՐ

ԿՐԹԱԹՅԱԿԸ ԱՆՎՃԱՐ Է

ԻՆՉՈ՞Ւ ՄԵՋ ԸՆՏՐԵԼ

- Հայեցի Դաստիարակութիւն
- Արդիական Մանկապարտէզ
- Կեանքի Հմտութիւններ
- Արտադասարանային Ծրագիրներ
- ROBOTICS
- Հոգատար Միջավայր
- Նկարագրի Կերտման Ծրագիր
- Աշակերտակեդրոն Ուսուցում
- Արհեստագիտութեան Օգտագործում
- STEAM (Science, Technology, Engineering, Art, Math)

ՎԵՐԱՄՈՒՏ
Նախակրթարան, Միջնակարգ, Պրեզլէ՝
ՍԵՊՏԵՄԲԵՐ 24
Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզ՝
ՀՈԿՏԵՄԲԵՐ 8

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ՍԵՊՏԵՄԲԵՐ 3-ԷՆ սկսեալ
առաւօտեան ժամը 9-12

01/260525
01/260574

Bourj Hammoud,
Tripoli str., LEBANON

info@vahantekeyan.com
www.vahantekeyan.com

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈՎԱՆԻՒՆ ՆԵՐՔՈՅ ՀԱՅԸ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼԸ

(Շարունակում 5-րդ էջին)

Այս խօսքերուն մէջ կը խտանար Պատրիարք Մինասեանի պատկերացումը մամուլի առաքելութեան մասին: Լրատումիջոցը միայն անցուդարձը արձանագրող ու լուրը փոխանցող կառոյց մը չէ. ան կրնայ պատմական յիշողութիւնը կենդանի պահել, վկայութիւն մը սերունդէ սերունդ փոխանցել եւ հասարակութեան առջեւ արժէքներու հարցադրումներ դնել:

Այս հանգամանքը երեկոյին կը հաղորդէր առանձնայատուկ խորհրդանշականութիւն: Այն վայրին մէջ, ուր անցեալին տպագրուած էջերու միջոցով խօսքը կը հասնէր ժողովուրդին, այսօր հաւաքուած էին անոնք, որոնք նոր միջոցներով կը շարունակէն նոյն առաքելութիւնը՝ խօսքը հասցնելով հանրութեան, պահպանելով յիշողութիւնը եւ արձանագրելով ժամանակի վկայութիւնները:

Այսպիսով, երեկոն կը դառնար ոչ միայն լիբանանեան մամուլի մեծարման առիթ մը, այլեւ խորհրդանշական հանդիպում մը անցեալի եւ ներկայի միջեւ: Պատրիարքութեան հին տպարանի յիշողութիւնը եւ ժամանակակից լրատուութեան ներկայութիւնը կը միաձուլուէին մէկ գաղափարի շուրջ՝ խօսքը ծառայութիւն է, իսկ ճշմարտութիւնը՝ պատասխանատուութիւն:

Այս պատմութեան կիզակէտին կը կանգնի Հայ Եկեղեցւոյ եւ Տիեզերական Եկեղեցւոյ հօր անհատականութիւններէն մէկը՝ Կարդիմալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան:

Աղաճանեան ժամանակէն առաջ գիտակցած էր այն առաքելութիւնը, որ կարծես ժառանգած էր Քրիստոսի լեռներուն մէջ ապրած իր ճգնաւոր նախնիներէն՝ այն հոգեւորականներէն ու մտաւորականներէն, որոնք գրիչը կը դարձնէին ծառայութեան միջոց, կը գրէին, կը տպագրէին եւ խօսքը կը հասցնէին ժողովուրդին:

Այսպիսով, տպագրուած խօսքը կը վերածուէր առաքելութեան՝ ծառայելով Եկեղեցիին, ժողովուրդին, հասարակութեան եւ, աւելի լայն իմաստով, մարդուն:

Պատրիարք Մինասեան, անդրադառնալով այս պատմական ժառանգութեան, ընդգծեց ժամանակի խորհրդաւոր գուգադիպութիւնը.

«Միբլի՛ բարեկամներ, որքա՛ն հրաշալի է, որ ժամանակը մեզ այսօր համախմբած է հոս՝ այս նոյն վայրին մէջ: Այստեղ ժամանակին տպագրական հաստոցը կը գործէր, իսկ այսօր այստեղ կը հաւաքուին լրատումիջոցներու ներկայացուցիչները:

Փոխուած են քանաքն ու արհեստագիտութիւնը, փոխակերպուած են մետիա-հարթակները, որոնք այսօր գրուած խօսքին հնարաւորութիւն կու տան վայրկեաններու ընթացքին հատելու մայրցամաքներ: Սակայն խօսքին հանդէպ ունեցած սրբազան պատասխանատուութիւնը կը մնայ անփոփոխ»:

Տպագրական հաստոցէն մինչեւ այսօրուան թուային աշխարհը ճանապարհը երկար է, սակայն առաքելութիւնը նոյնն է՝ ճշմարտութիւնը հասցնել մարդուն, վկայել ժամանակի մասին եւ խօսքը ծառայեցնել մարդուն ու հասարակութեան:

Աղաճանեանի թողած ժառանգութիւնը, այս իմաստով, միայն պատմական յիշատակ մը չէ: Ան կը շարունակէ ապրիլ ամէն անգամ, երբ գրիչը, տեսախցիկը կամ ձայնը կը ծառայեն ճշմարտութեան, երբ մամուլը կը պաշտպանէ մարդու արժանապատուութիւնը եւ երբ խօսքը կը դառնայ ծառայութիւն:

Երբ Կարդիմալ Աղաճանեանի աճիւնը վերադարձաւ Լիբանան եւ արժանացաւ իր մեծութեան վայել պատուոյ ու հանդիսատւոր ընդունելութեան, այդ վերադարձը պարզապէս մեծ մարդու մը վերադարձը չէր իր սիրելի երկրին: Անոր հետ հայրենիք կը վերադառնար նաեւ յիշողութիւն մը, առաքելութիւն մը եւ հարուստ ժառանգութիւն մը՝ տարիներու ընթացքին կերտուած հաւատքով, ծառայութեամբ եւ խօսքի ուժին հանդէպ ունեցած անսասան համոզումով:

Այդ ժառանգութեան այսօր մատուցուելիք լրագոյն յարգանքի տուրքը, Պատրիարքին համոզումով, խօսքը ճշմարտութեան ծառայեցնելն է՝ ոչ թէ շահերուն, իսկ մարդուն՝ ոչ թէ պառակտումին:

Պատրիարք Մինասեան ապա խօսքը ուղղեց Լիբանանի ներկայ իրականութեան՝ ընդգծելով լրատումիջոցներու առանձնայատուկ պատասխանատուութիւնը երկրի այս զգայուն հանգրուանին:

Մենք կ'ուզենք ունենալ ազատ լրատումիջոցներ, որովհետեւ ազատութիւնը Լիբանանի ինքնութեան անբաժանելի մասն է: Սակայն կը ձգտինք պատասխանատու ազատութեան մը՝ այնպիսի ազատութեան, որ կը գիտակցի, թէ բառ մը կրնայ ժողովուրդ մը միատրել, ինչպէս նաեւ կրնայ անոր գաւակներուն միջեւ այնպիսի պառակտում մը յառաջացնել, որ երբեմն դժուար ըլլայ հարթել:

Ուստի, կ'ուզենք ունենալ այնպիսի լրատումիջոցներ, որոնք ենթակայ են վերլուծութեան, հարցադրումներու, հանրային քննարկման եւ հաշուետուութեան, բայց որոնք չեն դատուիր դատական համակարգէն դուրս: Լրատումիջոցներ, որոնք տարակարծութիւնը չեն վերածեր թշնամանքի»:

Այս իմաստով, Պատրիարք Մինասեանի պատգամը կը վերադառնար երեկոյին հիմնական գաղափարին՝ **մամուլը միայն մասնագիտութիւն մը չէ, այլ պատասխանատուութիւն եւ առաքելութիւն է:** Եւ այդ առաքելութեան առաջին պայմանը ճշմարտութիւնն է:

Պէյրոյք

Մեծ Երապի Ճամբուն Ուղեւորները

ՎԱՐՈՒԺԱՆ ՊԵՏԻԿԵԱՆ

(Շարունակում 3-րդ էջին)

«Զարթօնք» ակումբին: Իր ուսուցչական տարիներուն քաջալերած է ուսանողներուն միանալու ՌԱԿ-ի շարքերը եւ զանոնք առաջնորդած է մաքուր հայրենասիրութեամբ եւ ողջմիտ քաղաքական տեսութիւններով: Միշտ սիրուած է եղած իր ուսանողներէն, որոնցմէ շատեր իրենց պատանեկան ու երիտասարդական առօրեայ կեանքի դժուարութեանց հոգեկան ներքին սիրտը բացած են Պարոն Պետիկեանին: Ան որպէս մեծ եղբայր անյապաղ հասած է օգնութեան բոլոր անոնց որոնք դիմած են իր խորհուրդներուն: Երախտապարտ անոնցմէ շատեր մնացին մինչեւ վերջ սրտակից իր հետ:

Հրաւերովը իր նախկին ուսանողներուն կու գայ Նիւ Ճըրքի ու կ'ունենայ հանդիպումներ իր սիրելի աշակերտներուն հետ: Կ'այցելէ նաեւ Պոստոն եւ Նիւ Հեմշըր վաղեմի բարեկամներու եւ գաղափարի ընկերներու, ինչպէս նաեւ՝ Լոս Անճելըս:

Կը մահանայ Նիկոսիոյ մէջ, Մայիս 19, 1989-ին:

ՃԱՇԱԿ ՄԸ ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵՆԷՆ

Հատուած մը «Մղկտում»՝ Արարատին քերթուածէն.

Ամէն անգամ, Ո՛վ Արարատ, Երբ կը բացուիս Դիմացն աչքիս՝ Պատըշգամէն հիւր սենեակիս, Կը մղկըտայ սիրտըս անդու ...: Բայց նոյն ատեն Հաւատք մը խոր Կ'եռայ, կ'եռայ Երակներուս մէջ հայկազուն ... Եւ կ'ուզեմ որ համբերես դուն.	Ձի պիտի գայ Օրն արփալիի՝ Երբ փշրուին պիտի կրկին Շղթաները գերութեանդ ծանր, Ըլլաս ազատ ու կենսաւետ, Մեզի նըման Ու մեզի՛ հետ մընաս յաւետ: <i>Նոյեմբեր 7, 1983 Ֆիզիսքերապիայի ինստիտուտ, Երեւան</i>
---	--

ՍՕՍԻ ՊԵՏԻԿԵԱՆ

(Շարունակում 3-րդ էջին)

Պետիկեան գործօն մասնակցութիւն բերած է նաեւ ՀԵԸ-ի Հայ Համալսարանական Ուսանողաց Միութեան, Թէքէեան Մշակութային Միութեան եւ Զարեհ Նուպար Ակումբի վարչութիւններէն ներս:

Թէքէեան Մշակութային Միութիւնը Պէյրոյի Թէքէեան Կեդրոնին մէջ կը մեծարէ Սօսի Պետիկեանը Մայիս 13, 2000 թուականին անոր կատարած կրթական ու հասարակական երկարամեայ գործունէութեան համար: (Նոյն օրը կը մեծարուի նաեւ Գրիգոր Քէօսէեան՝ որպէս հրապարակագիր ու խմբագիր): Սօսին յուզուած էր, որովհետեւ 18 տարուան բացակայութենէ մը ետք, Պէյրոյ գալով կը հանդիպէր իրեն շատ սիրելի բարեկամներու եւ ծանօթներու: Ան հարց կու տար թէ արդեօք կրցած էր սերունդներ պատրաստել ու դարբնել այնպէս ինչպէս մեզ կերտած էին Արա Թօփճեանի, Գերսամ Ահարոնեանի, Բարունակ Թովմասեանի Հրաչեայ Սեդրակեանի նման մեծութիւններ: Խօսք կ'առնէ Ռոզէր Ալեմեան-Մահսերէճեան, որ եղած էր ուսանողուհի եւ պաշտօնակիցը: Ընթերցումներ կը կատարէ Պայծիկ Գալայճեան եւ ԹՄՄ-ի տեղական վարչութեան ատենապետ Տոքթ. Աւետիս Տազէեանի եւ ատենադպրուհի Սիլվա Ռուֆալեանի ձեռամբ մեծարեալները կը պարգեւատրուին յատուկ յուշանուէրով:

Անդրադառնալով Դարուիի Յակոբեան երկրորդական վարժարանի 35-ամեակին, Պետիկեան այսպէս գնահատած է վարժարանին ազգային կեանքէն ներս բերած յաջողութիւնը, արձանագրուած «Յուշարար-Միութիւն» պաշտօնաբերքին մէջ. «Ազգային տեսակէտով Դարուիիի շրջանաւարտները իրենց գործօն մասնակցութիւնը կը բերեն մեր ազգային հասարակական կեանքին: Մեր շրջանաւարտուիներէն 75-ը որպէս ուսուցչուհի կամ ընկերային գործիչ կը ծառայեն Լիբանանի մէջ: Հպարտութեամբ կը յիշենք թէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան բոլոր մարմիններուն մէջ իզական սեռի գործօն անդամներուն ջախջախիչ մեծամասնութիւնը Դարուիիի շրջանաւարտուիներն են. իսկ արտասահման գտնուող մեր շրջանաւարտուիները՝ նոյնպէս գնահատելի աշխատանք կը կատարեն հայապահպանման գիծով»:

Յետ կարճատեւ անողորբ հիւանդութեան մը կը մահանայ Շաբաթ, Յունուար 26, 2002-ին, Նիկոսիոյ մէջ:



ԿԱՅԻՐԻ ԵՐԱՅԻՐ Շաբաթաթերթ

www.baikarweekly.com

ՔԱՆՈՆԱԿԱՐՈՒՄԻ ՄԱՐԻԱՆՆԱ ԳԵՈՐԳԵԱՆ ICMA-Ի «ԼԱԻՎԱԳՈՅՆ ԵՐԱԺԻՇՏ»Ը ՀՈՉԱԿՈՒԵՅԱԾ

Ուրախությամբ կը տեղեկանանք, որ վարպետ ու հեղինակատոր քանոնահարուհի Մարիաննա Գեորգեան դարձած է՝ Միջցամաքամասային երաժշտական մրցանակի (ICMA) դափնեկիրներէն մին։ Ան «լաւագոյն երաժիշտ» անուանակարգին մէջ նուաճած է առաջնութիւն։ Իր այդ յաղթանակը չափազանց կարեւոր նշանակութիւն ունի հայկական երաժշտութեան միջազգային ծանօթացման տեսակէտէ՝ մանաւանդ, որ Մարիաննա Գեորգեան վիրթիւօգ մըն է աւանդական նուագարանի մը՝ քանոնի, որու ձայնը այնքան խորհրդաւոր ու տպաւորիչ կը հնչէ իր կատարումներուն ժամանակ։

Մարիաննա Գեորգեանի մասնակցած ICMA-ի մրցակցութիւնը եղած է բաւական բարդ։ Աշխարհի շուրջ հարիւր երկրէ մօտաւորապէս երեք հազար հինգ հարիւր արուեստագէտ մրցակցութեան մէջ մտած է՝ նուաճելու համար այս կարեւոր մրցանակը։

Այս տարուան գերազանց նուաճումէն առաջ, Մարիաննա Գեորգեան անցեալ տարի ալ արժանացած էր «Global Icon Awards» կոչումին։ Դափնիներու այս հետեւողականութիւնը կու գայ հաստատել, որ Մարիաննա Գեորգեան յարատեւ վերելքի մէջ է, ինքզինքը միշտ կը կատարելագործէ եւ այդ բոլորը նոր հորիզոններ կ'ուրուագեն իր առջեւ։

Հարկ է նշել, որ Մարիաննա Գեորգեան Երեւանի «Կոմիտաս» սենեկային երաժշտութեան ազգային կեդրոնի «Տաղարան» հնագոյն երաժշտութեան համոյթի (գեղարուեստական ղեկավար՝ Ս. Երկանեան) մենակատար քանոնահարուհիներէն մին է։

Այս առթիւ ջերմօրէն կը շնորհատրեմք քանոնահարուհի Մարիաննա Գեորգեանի այս անվիճելի յաղթանակը, որ իսկապէս հպարտութեան առիթ մըն է եւ իրեն համար քաջալերական մը՝ նորանոր բարձունքներ նուաճելու ճանապարհին։

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ԵՐՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՐԱՐԱՆԸ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԻՏԻ ՊԵՆ...

(Շարունակուած Ա. Էջէն)

Այս նախաձեռնութիւնը ուղղակի պատասխան է 2026 թուականի Մայիսէն ի վեր Ռուսաստանի կողմէ հայկական արտածման առանցքային ապրանքներու (յատկապէս՝ ոգելից ըմպելիներ, հանքային ջուրեր, պտուղ ու բանջարեղէն) եւ անոնց տարանցման դէմ կիրարկուող սահմանափակումներուն։ Եւրոպական յանձնաժողովին համաձայն՝ ռուսական այս արգելքները խաթարած են մատակարարման աւանդական շղթաները՝ ծանր հարուած հասցնելով յատկապէս փոքր եւ միջին ձեռնարկութիւններուն ու գիւղատնտեսներուն։

Եւրոպական Միութիւնը այս քայլը կը դիտարկէ որպէս հայկական տնտեսութեան աջակցելու եւ արտաճողներուն համար եւրոպական շուկայ մուտք գործելու այլընտրանքային հնարաւորութիւններ ստեղծելու առժամային միջոց։

«WIZZ AIR»-Ը ԵՐԵՒԱՆԵՆ ԹՈՒՂՔՆԵՐ ՊԻՏԻ ՍԿՍԻ ԵՐԵՔ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

(Շարունակուած Ա. Էջէն)

ասուլիսի ընթացքին յայտնած է, որ նոր թռիչքները պիտի կատարուին դէպի Պազել (Չուիցերիա), Վալենսիա (Սպանիա) եւ Վառնա (Պուլկարիա)։ Մասնաւորապէս՝ Դեկտեմբեր 18-էն սկսեալ շաբաթական երեք թռիչք պիտի կատարուի դէպի Պազել, Դեկտեմբեր 19-էն՝ շաբաթական երկու թռիչք դէպի Վալենսիա, իսկ 2027 Յունիս 6-ին պիտի սկսին դէպի Վառնա թռիչքները։

Ըստ Մալիկի՝ Դեկտեմբեր 17-ին չորրորդ օդանաւի Երեւան ժամանումէն ետք պիտի աւելայ նաեւ արդէն գոյութիւն ունեցող շարք մը ուղղութիւններով թռիչքներու յաճախականութիւնը։ Երեւան-Փրակա թռիչքները պիտի հասնին շաբաթական հինգի, իսկ դէպի գերմանական Մեմինկեն քաղաք՝ չորսի։ Նշենք, որ ընկերութիւնը Յայաստանէն արդէն ունի 18 ուղղութիւն՝ դէպի եւրոպական 12 երկիրներ։

Տնօրէնը նաեւ ընդգծած է, որ «Wizz Air»-ի շուրջ 270 օդանաւերուն մեծ մասը «Airbus A321neo» տիպի են, որոնք կը յատկանշուին վառելանիւթի խնայողութեամբ, ինչ որ կարեւոր է նաեւ բնապահական տեսանկիւնէն։ Ընկերութիւնը, որ այս տարի կը նախատեսէ հասնիլ 100 միլիոն ճամբորդի սպասարկման, իր օդանաւերը ներկայիս կը կայանէ 44 օդակայաններու մէջ։

ՈՒՆՏԱԴՈՐՆԵՐՈՎ ԱՐՏԱՍՈՎՈՐ ՈԳԵԻՈՐՈՒԹԻՒՆ

(Շարունակուած Ա. Էջէն)

Թեմակալ առաջնորդ Ս. Մետրոպոլիտան Դարսամեան, որ կը գլխաւորէ այս ուխտագնացութիւնը, հանդիսաւոր արարողութեամբ մուտք գործեց եկեղեցի՝ առընթերակայութեամբ Նիւ Եորքի Ս. Ներսէս ընծայարանի տեսուչ Ս. Մարտիրոս աւ. քահանայ Զեւեանի եւ Արեւելեան թեմի հոգեւորականաց դասէն Ս. Արմաշ քահանայ Պաղտասարեանի։ Հիւր ուխտաւորները դիմաւորելու համար ներկայ էր նաեւ Տիարապաշտի Ս. Կիրակոս եկեղեցւոյ ծխական խորհուրդի ատենապետ Երկին Այրը։

Նորին Սրբազանութեան հանդիսապետութեամբ պատմական եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ ուխտի աղօթք։ Երգեցողութիւններէն վերջ կատարուեցաւ նաեւ հոգեհանգստեան պաշտօն։

Եկեղեցական արարողութիւններէն վերջ, տաճարի շրջափակին մէջ ուխտաւորներուն ի պատիւ սարքուեցաւ ընդունելութիւն մը։

Նորին Սրբազանութիւնը պատգամին մէջ հիացումով արտայայտուեցաւ Տիարապաշտի Ս. Կիրակոս եկեղեցւոյ մասին՝ ընդգծելով, որ ան Մերձաւոր Արեւելքի ամենամեծ հայկական սրբավայրը կը հանդիսանայ։

Այս ընդունելութեան ընթացքին բոլորը առիթ ունեցան ծանօթանալու նաեւ եկեղեցւոյ շրջափակին, իսկ Երկին Այրըի հետ զրոյցը առիթ ստեղծեց, որպէսզի ուխտաւորները անելի կատարեալ պատկերացում մը ունենան Տիարապաշտի եկեղեցւոյ ներկայ վիճակին եւ կարիքներուն շուրջ։ Ծանօթ է, որ Ս. Կիրակոս եկեղեցին Պոլսոյ Պատրիարքական Աթոռի հոգեւոր իշխանութեան սահմաններուն մէջ գտնուող գաւառի հինգ եկեղեցիներէն մին է։

Հարկ է նշել, որ Ս. Մետրոպոլիտան Դարսամեանի գլխաւորութեամբ, ուխտաւորներու խումբէն փոքր թիւով հիւրեր այցելեցին նաեւ քաղաքի Ս. Սարգիս եկեղեցին, որ ներկայիս կարիքն ունի հիմնական վերանորոգութեան։

ԵՐՐՈՒՍԱՂԵՍԻ ԶԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԸ ՀԻՒՐԵՆԿԱԼԵՅ ...

(Շարունակուած Ա. Էջէն)

Եւ մասնաւորաբար՝ Սուրբ Երկրի ներկայ իրավիճակին, տարածաշրջանէն ներս խաղաղութեան հաստատման անհրաժեշտութեան, ինչպէս նաեւ քրիստոնեայ համայնքներու դիմագրաւած մարտահրաւերներուն։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ողջունեց պատուիրակութեան անդամները եւ բարձր գնահատեց անոնց յանձնառութիւնը՝ մանաւանդ խաղաղութեան, արդարութեան ու միջեկեղեցական համագործակցութեան ուղղութեամբ ծաւալուած աշխատանքները։ Հիւրերը հայոց վանքէն հրաժեշտ առին՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր շնորհակալութիւն յայտնելով բովանդակալից գրոյցին համար։

Հայ Երուսաղէմը վերջին շրջանին իրերայաջորդ բարձրաստիճան հիւրեր կ'ունենայ՝ Մերձաւոր Արեւելքի քրիստոնեաներուն բաժին հասած առկայ մարտահրաւերներու պայմաններուն ներքեւ։

ՈՒՐՈՒԱԳԻԾ ԴԻՄԱՆԱԿԱՐԻ ՀԱՄԱՐ

(Շարունակուած 7-րդ էջէն)

հանդիսավայր «Մեհեան» /1914/ գրական հանդէսէն ստացած իր սրտի եւ համակողմ վերլուծումը կու գայ իր իմացական «պահուածքէն» մանաւանդ Մեծ եղեռնի «նախադրան» սեմին «Մեհեան»ը իրապէս գրական-իմացական գետնի վրայ երեւոյթ մըն էր՝ հայ գրականութեան եւ գեղագիտական միտքին նոր հեռանկարներ բացող՝ իր բովանդակութեամբ, ան կը մնայ մշակութային կարեւոր իրագործում մը։

Շեշտ բնորոշում մը «իբրեւ վերջին հանդիպավայրը արեւմտահայ գրականութեան»։ «Մեհեան»ի հանգանակին գաղափարատեսական հիմքէն չտարբերուող «Բարձրավանդ» հանդէսին նուիրումը գրական քննադատական էջերը քննաբանելէն յետոյ ամենեւին ալ յանկարծաղէպ չէ անդրադառնալ 1915 թուականին յաջորդող տարիներուն եւ նոր «հանդիպավայր մը» կը սեպուի ի դէմս փարիզեան «Մենք» սերունդի «տեղի եւ դերակատարների» իմացական եւ իմաստասիրական ճառագայթումներէն կը ցոլարձակէր հայ միտքը, եւ որ էական է. «Այդ հանգամանքով ալ փարիզեան մտաւորականութիւնը իրագործեց, որքէ ուրիշ հայկական գաղութ առաջ, եւ որքէ ուրիշ հայկական գաղութ աւելի, հայ մտքի հանդիպումը եւրոպական մշակոյթի հետ՝ Հայկական ինքնութեան, հոգեխառնութեան եւ մտածողութեան հաւատարիմ մնալով հանդերձ»։

Ամշուշտ համահայկական, իմացական լիարին կեցումաձք մը դրսեւորած են «Մենք» սերունդի գրողները, բանաստեղծները, գրադատները։ Ինչ կը վերաբերի առանձին գրողներու ստեղծագործական արժեւորումին, Պէպօ Սիմոնեան բնաւ «չէ զլացած», անդրադարձած է Վ. Շուշանեան-Շ. Շահնուր ստեղծագործական,- իրականին մէջ գաղափարաբանական,- հակասութիւններուն. «/Շահան Շահնուր եւ Վազգէն Շուշանեան «Մարդ մը որ Արարատ չունի իր հոգւոյն խորը» գիրքին լոյսին տակ» / իրարու բոլորովին ներհակ բեւեռներէ եւ բեւեռացումներէ կու գան ազգային եւ գաղափարային, ընկերային ըմբռնողութեան տեսակէտներ «թէ եւ երկուքն ալ ըմբոստ նկարագիրներ՝ սահմանազանց կեցումաձքով, պարունակներու շրջաձիրներէն դուրս գալու հակամիտութեամբ...»։

Պէպօ Սիմոնեան կ'եզրահանգէ գրողներու այլազան գաղափարներու տեսակէտէն. «Գաղափարներ որոնք կը տարազեն ազգային, ընկերային, գրական եւ ընդհանրապէս մշակոյթային ուրոյն համոզումները»։

Առանձնակի տեսանկի է այն ճիգն ու նուիրումութիւնը գոր Պէպօ Սիմոնեան գործածած է անշահեկանօրէն, իբրեւ գրադատ-վերլուծագիր՝ իր իսկ խօսքերով «միշտ կեանքի մէջ, կեանքին հետ հեղքոտ վազքով երախտաւորներու կեանքին ետին» պարտ ենք արժանաւորելու անոնց՝ հատուցանելով արժանին վաստակելներուն...

Կը խորհիմք որ 2027 թ. /կը լրանայ Պէպօ Սիմոնեանի 90-ամեակը/ պէտք է արժեւորուի վաստակեալ մտաւորականի գրական «վաստակը» հատուցանելով։

Երեւան
andranikean@yahoo.com

WIZZ AIR Շաբաթաթերթ

www.baikarweek.com